



ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

ԳԱՌՆԱՀՈՎԻՏ

ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

ГАРНАОВИТ

ЦЕРКОВЬ СВ. ГЕОРГИЯ

GARNAHOVIT

CHURCH OF ST. GEORGE





ԿՐԻՆՕՐԲՆԵԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

1106038

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ  
ԳԱՌՆԱՀՈՎԻՏ. ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ

АШОТ МАНУЧАРЯН  
ГАРНАОВИТ: ЦЕРКОВЬ СВ. ГЕОРГИЯ

ASHOT MANUCHARYAN  
GARNAHOVIT: CHURCH OF ST. GEORGE

ԵՐԵՎԱՆ  
«Լուսաբաց հրատարակչատուն»  
2020



*Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

ՀՏԴ 94(479.25):27

ԳՄԴ 63.3(52)+86.37

Մ 219

*Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵՂԻ Բ  
ՍՐԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ԿԵՀՍՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ*

**Տպագրության հովանավոր՝ Համլետ Թադևոսյան**

**Спонсор издания Гамлет Тадевосян**

**Printing supported by Hamlet Tadevosyan**

*Խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր  
Սարգիս Մխիթարյան*

**Մանուշարյան Աշոտ**

**Մ 219 Գառնահովիտ. Սբ. Գևորգ եկեղեցի: Դարնավիտ:**

**церковь Св. Георгия: Garahovit: Church St. George/ Ա.**

**Մանուշարյան.- Եր.: Լուսաբաց, 2020, 104 էջ:**

Աշխատանքը նվիրված է Հայաստանի վաղմիջնադարյան հրաշագան  
հուշարձաններից մեկի՝ Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցու ուսումնասի-  
րությանը: Ներկայացված են կառույցի ճարտարապետական նկարագրու-  
թյունը, պատմությունը՝ միախուսված Գառնահովտի պատմական անցյալի  
վերհանումներով, որոնց ուշագրավ դրվագներ արձանագրված են տաճարի  
պատերին, արտացոլված գլուխի բազմադարյան հնություններում:

Գրքույկը նախատեսվում է մասնագետների, պատմական հուշարձաններով  
հետաքրքրվող ընթերցողների, հայ և օտարազգի զբոսաշրջիկների համար:

ՀՏԴ 94(479.25):27

ԳՄԴ 63.3(52)+86.37

ISBN 978-9939-69-356-9

© Մանուշարյան Ա., 2020



Ս. Գևորգ Զորավարը տիեզերական՝ Համաքրիստոնեական սուրբ է: Նրա անունով եկեղեցիներ ունեն Համարյա բոլոր քրիստոնյա ժողովուրդները: Ուշագրավ է, որ Գևորգ Զորավարը Համարվել է Անգլիայի պահապան սուրբը<sup>1</sup>:

Ս. Գևորգը ծնվել է մոտավորապես III դ. 2-րդ կեսից Հետո Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիայի մերձակայքում բնակվող քրիստոնյա ընտանիքում: Մեծացել է քրիստոնեական դաստիարակության ոգով: Ծառայության անցնելով Հռոմեական բանակում՝ նա, շնորհիվ իր խիզախության ու իմաստության, կարճ ժամանակում դարձել է զորավար:

Ըստ մի ավանդության՝ Գևորգ քաջամարտիկ զորավարն սպանել է վիշապի՝ ազատելով որպես կերակուր նրա մոտ նետված մի կույսի<sup>2</sup>:

Հռոմի կայսր Դիոկղետիանոսի (284-305)՝ քրիստոնյաների նկատմամբ իրականացրած Հալածանքների ժամանակ զորավար Գևորգը հրաժարվել է կատարել կայսերական հրամանն ու բռնությունների ենթարկել խաղաղ բնակիչներին: Ավելին, նա Նիկոմեդիա քաղաքի հրապարակում պատռել է արքունական հրովարտակը, որի համար ձերբակալվել է: Կենտրոնական իշխանության ներկայացուցիչները կռահել են Գևորգի քրիստոնյա լինելն ու փորձել են նրան կրկին դարձի բերել Հեթանոսության, սակայն զորավարն ընդդիմացել է: Բանտարկված Գևորգն արիաբար տոկացել է սարսափելի չարչարանքների ու փորձությունների: Այդ ընթացքում նա, տոգորված քրիստոնեական խոր հավատով, կատարել է աստվածային հրաշագործություններ, մինչև անգամ աղոթքով հարուստ ու տվել մեռյալի: Տեսնելով հրաշքները՝ Աղեքսանդրիա կայսրուհին և կախարդ Աթանասիոսն ընդունել են քրիստոնեություն<sup>3</sup>: Կայսրը նույնպես փորձել է Գևորգին

<sup>1</sup> Տե՛ս Շ. արքեպս. Գալուստեան, Համաքրիստոնեական սուրբեր, ԹԵՀՐԱՆ, 2008, էջ 156:

<sup>2</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 205:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

վերստին հեթանոսական կրոնին դարձնել և այդ նպատակով նրան տարել է մեհյան, սակայն աստվածային նախանձահուզությամբ լցված՝ սուրբ զորավարը տաճարում մեկ առ մեկ կործանել է բոլոր կուռքերը: Այդ հանդգնության համար Դիոդորեսիանոսն անմիջապես գլխատել է տվել նրան<sup>4</sup>:

Գևորգի նահատակությունը տեղի է ունեցել 303 թ. Նիկոմեդիա քաղաքում, որտեղ էլ թաղվել է: Ասորի քրիստոնյաները նրա մարմինը տարել են Պաղեստինի Դիոսպոլիս քաղաք (կոչվել է նաև Ռամլե կամ Լյուդ քաղաքական, գտնվել է ներկայիս Թել-Ավիվի օդանավակայանից ոչ հեռու), որտեղ ասորական եկեղեցում սրբի նշխարները ցուցադրվել են մինչև XIII դար<sup>5</sup>:

Ըստ Զաքարիա Սարկավազի՝ Հայոց Սուրբ Ներսես Մեծ Հայրապետը (353-373) Գևորգ Զորավարի մարմինը (ալեկի հավանական՝ գլուխը<sup>6</sup> - Ա. Մ.) բերում է Հայաստան և ամփոփում Հովհաննավանքում<sup>7</sup>: XIII դ. 1-ին կեսին Հովհաննավանքի միաբանները Սուրբ Գևորգի նշխարները տեղափոխել ու ամփոփել են Մուղնիում, որտեղ էլ դրանց վրա հետագայում կառուցվել է տեղի Ս. Գևորգ եկեղեցին: Մուղնիից մասունքների մի մասը տարվել է Վրաստան՝ գողությամբ հիվանդ վրաց արքայազն Բեժոյի բուժման համար: Սակայն մասունքները դեռ տեղ չհասած՝ արքայորդին վախճանվում է: Որոշվում է դրանք ի պահ դնել Տփլիսում կառուցվող Հայկական եկեղեցում, որը ևս կոչվում Մուղնու Ս. Գևորգ

<sup>4</sup> Տե՛ս Ե. արքեպս. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 155:

<sup>5</sup> Տե՛ս www. qahana. am: Նաև՝ Ե. արքեպս. Գալուստեան, նույն տեղում:

<sup>6</sup> Կ. Մաթևոսյանը Վարդան Արևելցու «Աշխարհացոյց»-ից մեջ է բերում մի վկայութուն, ըստ որի՝ Մուղնու վանքում է պահվում «ծնօտն և զաղտն և ալանջն և արիւնն սրբոյ Գէորգայ զօրավարին» («Մուղնու Սուրբ Գևորգ վանքը», Ս. Էջմիածին, 2009, էջ 11, ըստ՝ «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Բարիդ, 1960, էջ 28): Գաղտը գլխի գազաթն է, որտեղ գանգի ոսկորները միանում են: Նորածին երեխաների մոտ այն կակուղ է լինում («Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, Հ. 1, եր., 1944, էջ 408):

<sup>7</sup> Տե՛ս Զաքարիա Քանաքեռցի, Պատմագրություն (Թարգմ. և ծանոթագր. Վարազ Առաքելյանի), Եր., 2013, էջ 240:

(այստեղ է պահվել նաև հռչակավոր «Մողնու Ավետարան»-ը)<sup>8</sup>:

Սուրբ Գևորգը, ինչպես մյուս զորական սրբերը, հիմնականում պատկերվում է ձիով վրա՝ առավելապես նիզակով զետնաթավալ վիշապի շանթահար հարվածելիս: Այլաբանորեն վիշապը ներկայացնում է աշխարհի չարությունը, դիվական զորությունը և բռնակալությունը, որոնց դեմ անվեհեր պայքարել են Քրիստոսի նահատակ սուրբ զորականները<sup>9</sup>:

Միջնադարյան Հայաստանում հայ թագավորներն ու զինվորականները Գևորգ Զորավարին համարում էին իրենց հովանավոր սուրբը<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցուն, ապա ենթադրելի է, որ ներսես Մեծ կաթողիկոսի ժամանակակիցը, որին կանդրադառնանք ավելի ուշ, անմիջապես սուրբ հայրապետից ստանալով զորականի սրբազան մասունքը՝ բերել է գյուղ և տեղում հանուն նրա կառուցել եկեղեցի: Հետագայում վերջինս հիմնովին վերափոխվել է այսօր շուրջ հազար երեք հարյուր հիսուն տարիների պատմական անցուդարձերը վեհորեն կրող հրաշազան տաճարով:

<sup>8</sup> Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 768:

<sup>9</sup> Տե՛ս Ե. արքեպս. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 155:

<sup>10</sup> Տե՛ս Կ. Մաթևոսյան, Մողնու Սուրբ Գևորգ վանքը, Եր., 2000, էջ 10:

## Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հեռավոր, բարձր լեռնային փոքր գյուղում նրա ճաշակ ճարտարապետությունը, առանձնահատուկ վայելչությունը կառուցված եկեղեցին միշտ էլ գրավել է մասնագետների ուշադրությունը ոչ միայն հայ, այլև՝ օտարազգի: Եկեղեցու ճարտարապետությանն անդրադարձել են Ա. արքեպս. Մխիթարյանցը<sup>11</sup>, Թ. Թորամանյանը<sup>12</sup>, Ա. Երեմյանը<sup>13</sup>, Ն. Տոկարսկին<sup>14</sup>, Գ. Չուբինաշվիլին<sup>15</sup> և ուրիշներ: Կառույցն առավել հանգամանալից ուսումնասիրել է Տ. Մարությանը<sup>16</sup>:

Գառնահովտի Ս. Գևորգ սրբարանը պատկանում է հռիփ-սիմեատիպ եկեղեցիների դասին, որի ակունքներն սկիզբ են առնում Երևանի Ավանի տաճարից: Ս. Գևորգ կենտրոնա-գմբեթ եկեղեցին իր հատակագծով արտաքուստ ուղղանկյուն-քառանկյունի է, ներքուստ՝ քառախորան խաչաձև, չորս անկյուններում կառուցված ավանդատներով, որտեղ մտնում են 3/4 խորշերով:

Այն անսյուն շինություն է, որը, ըստ ճարտարապետ Տ. Մարությանի, ունի 19,5 մ երկարություն, 15,70 մ լայնություն և 9 մ բարձրություն մինչև քիվը<sup>17</sup>:

<sup>11</sup> Տե՛ս Ա. արքեպս. Մխիթարեանց, Ստորագրութիւն եկեղեցեաց ինչ յոտն Արագածու, «Արարատ», 1870, Գ. տարի, թիւ 7., էջ 122-123, նույնի, Երկերի ժողովածու, Ս. էջմիածին, 2009, էջ 102:

<sup>12</sup> Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, ժող. 1-ին, ժող. 2-րդ, Եր., 1942, 1948: Թ. Թորամանյանը հայտնում է, որ այժմյան տաճարի արևմտյան կողմում եղել է մի ուրիշ եկեղեցի, որի հիմքերը քանդել են գյուղացիները՝ իրենց բնակարանները շինելու համար: Կառուցված է եղել ավելի խոշոր քարերով, որով կազմել են ներկայիս տաճարի բնառէջքը (տե՛ս ժող. 2-րդ, էջ 163):

<sup>13</sup> Տե՛ս А. Еремян, Храм Рипсиме, Ереван, 1955:


<sup>14</sup> Տե՛ս Н. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946: Նույնի, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961:

<sup>15</sup> Տե՛ս Г. Чубинашвили, Памятники типа Джвари, Тбилиси, 1948: Նույնի, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967:

<sup>16</sup> Տե՛ս Տ. Մարության, Ավանի տաճարը և համանման հուշարձաններ, Եր., 1976:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 51, 54:





Նկ. 1. Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցու  
Հատակագիծն ըստ Տ. Մարությանի

Рис. 1. План церкви Св. Георгия в Гарнаовите по Т. Марутяну

Pic. 1. The plan of St. George church in Garnahovit according to T. Marutyan

Այդ ամբողջ ուղղանկյունաձև ծավալը նստած է եռաստի-  
ճան պատվանդանախարսխի վրա:

Ճակատային բոլոր չորս պատերին, ինչպես Հռիփսիմեի  
տաճարում և Համանման մի քանի հուշարձաններում,  
բացված են միմյանցից համաչափ հեռավորության վրա  
գտնվող երկուական միանման հայկական խորշեր, որոնք  
կառույցի սեյսմակայունութունն ապահովելուց զատ, եկե-  
ղեցուն հաղորդում են առանձնակի հմայք: Եվ երբ հատա-  
կագծային ձևերում ուղղահայաց ու հորիզոնական գծիկնե-

րով պայմանականորեն իրար ենք միացնում ճակատային բոլոր չորս զույգ խորշերը, ստանում ենք քրիստոնեական կրոնի խորհրդանիշ խաչի պատկեր: Գառնահովտի եկեղեցու բոլոր խորշերը սեղանաձև հիմքով են, «որոնք վերևում ավարտվում են...հատած կիսակոնով»<sup>18</sup>: Դրանց գրեթե բոլորի անմիջապես ներքևում կան քանդակներ՝ հավասարաթև խաչ շրջանի մեջ (հարավարևմտյան խորշ), Ս. Երրորդությունը խորհրդանշող զարդաքանդակ, որը նման է հարավային պատուհանի աղեղնապսակի քանդակներին (հարավարևելյան խորշ), հավերժության իմաստ արտահայտող մեկական վեցաթև վարդյակներ (արևելյան պատի երկու խորշերին) և այլն: Կոնաձև ավարտով և գմբեթարդով խորշեր ունեն նաև չորս խաչաթևերի ճակտոնները: Հյուսիսային պատի արևմտյան խորշի գմբեթարդից ցած պատկերված է արևելքից արևմուտք վարդող ձի: Թե ինչ խորհուրդ ունի ձին այդ եկեղեցում, կասենք ավելի ուշ:

Ս. Գևորգը մյուս համանման պաշտամունքային շինություններից տարբերվում է նրանով, որ գլխավոր՝ արևմտյան ճակատի խորշերն իրենց «ներքնամասում ունեն զույգ սյուներ (խարիսխով և խոյակով)... թերևս դրված են եղել տաճարի մանրաքանդակը և քարակերտ խաչեր, որոնց հետքերը չեն պահպանվում»<sup>19</sup>: Սակայն ըստ մեր վարկածի՝ այդ երկու սյուների վրա տեղադրված են եղել Սուրբ Գևորգի արձանը՝ աջ բազկով նիզակը գեղարդով դեպի ցած բռնած և տաճարի պատվիրատուի անդրին՝ եկեղեցու մանրակերտը երկու ձեռքով առաջ պարզած, ինչպես Գագիկ Ա Բագրատունի Շահանշահինը (990-1020) Անիի Ս. Գրիգոր եկեղեցում: Անգամ որոշ մանրամասներ հուշում են, որ պատվիրատուի արձանը դրված է եղել արևմտյան պատի հարավային խորշում, քանի որ վերջինիս գմբեթարդի ստորին մասերն աջ և ձախ կողմերից ավարտվում են արևի ճառագայթների եռանկյունաձև փնջերի քանդակներով: Իսկ դրանց


<sup>18</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>19</sup> Նույն տեղում:

իմաստն այն է, որ պատվիրատուի վրա թող միշտ արեւատու-  
թյուն լինի:

Բոլոր չորս ճակատների զույգ խորշերի միջև բացված են  
մեծադիր պատուհաններ, որոնք ապահովում են լույսի  
ներթափանցումը տաճարից ներս: Պատուհանները վերևում  
ունեն աղեղնապսակներ, որոնցից երկուսի վրա կան անուն-  
ների գեղազիր մակագրություններ:

Առաջինն արևմտյան լուսամուտինն է.



Նկ. 2. Գծապատկերն ըստ Տ. Մարությանի


Рис. 2. Чертеж по Т. Марутяну

Pic. 2. Drawing according to T. Marutyan

Գրչապատկերից տեսնում ենք, որ երբեմնի արձանա-  
գրությունից պահպանվել են հետևյալ Գ Ո Ր Գ Ր Ի  
տառերը, որոնք որևէ իմաստ չեն արտահայտում: Տ.  
Մարությանը վկայակոչում է Աբրահամ Շահինյանին, որը  
հնարավոր է համարում այդ երկու խումբ տառերի տեղա-  
փոխմամբ կարդալ ԳՐԻԳՈՐ<sup>20</sup>: Կարծում ենք՝ դժվար  
չինարարներն այնքան տգետ լինեին, որ առաջ բերեին  
տառերի շփոթ, որը կարող էր ծագել, ինչպես երբեմն լինում

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 63: Նաև՝ Ա. Շահինյան, 7-րդ դարի կոթողներ  
Գեղամա լեռներում, «Էջմիածին», 1974, է-Ը, էջ 78:

է, վերանորոգումների ժամանակ, սակայն նախկինից «ողջ տաճարի վրա... նորոգումների հետքեր իսպառ չկան»<sup>21</sup>: Վիմագրագետ, արվեստաբան Ալեքսանդր Մանուչարյանը տառաշարքն իրավացիորեն առաջարկում է վերականգնել ԳՐԻԳՈՐ ԳՐԻԶ.<sup>22</sup> քանդակի սկզբնական շրջանակներում նշմարվում են հողմահարված ԳՐԻ վանկի տառահետքերը, իսկ հիշատակազրուծյան ամենավերջին Չ տառը ջնջվել է ժամանակի հողմերի պատճառով<sup>23</sup>:




Նկ. 3. Գծապատկերն ըստ մեր վերծանության  
Рис. 3. Чертеж согласно нашей интерпретации  
Pic. 3. Drawing according to our interpretation

Մակազրուծյուն ունի նաև հարավային շքամուտքից վեր՝ երկու որմնախորշերի արանքի պատուհանի աղեղնապսակը, որտեղ գեղազրված է՝ ՄՈՎՍԷՍ.

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>22</sup> Տե՛ս Ալ. Մանուչարյան, Քննություն Հայաստանի IV-XI դարերի շինարարական վկայագրերի, Եր., 1977, էջ 80:

<sup>23</sup> Տեղագիր Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանցը ժամանակին (XIX դ.) տեղում կարդացել է Գրիգոր (տե՛ս Ա. արքեպս. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 123, 102):



Նկ. 4. Գծապատկերն ըստ Տ. Մարությանի  
 Рис. 4. Чертеж согласно Т. Марутяну  
 Pic. 4. Drawing according to T. Marutyan

Այդ անվան մեջ Տ. Մարությանը հակված է «տեսնել Մովսես Եղվարդեցի կաթողիկոսին (574-604 թթ.)»<sup>24</sup>: Ալ. Մանուչարյանը միանգամայն տրամաբանորեն նկատում է, որ «կաթողիկոսի անվան փորագրությունը որևէ կերպ պատճառաբանել հնարավոր չէ: Բնականաբար, հարց է ծագում. իսկ ո՞վ է այդ դեպքում Գրիգորը, որի անունը կաթողիկոսի պատշաճությունը փորագրվել է արևմտյան պատուհանի պսակի ատամնաշարի արանքներում... կարծում ենք, որ Մովսեսը և Գրիգորը պատուհանի պսակը քանդակող վարպետները լինեն»<sup>25</sup>:

Արևմտյան ճակատային գլխավոր լուսամուտի աջ և ձախ կողմերին՝ աղեղնապսակից մի փոքր ցած, ճարտարապետի անվան գեղագիր մակագրություններն են (դրանց կանդրադառնանք ավելի ուշ), որոնք, կարծում ենք, փորագրել է վարպետ Գրիգորը, որի պատճառով էլ կոչվել է ԳՐԻԶ:

<sup>24</sup> Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 63:

<sup>25</sup> Ալ. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 80:

Հայկական ճարտարապետության պատմության գիտակ, ակադեմիկոս Վարագդատ Հարությունյանի վստահեցմամբ՝ Գառնահովտի եկեղեցու յուրահատկություններից են ճակտոնների տակ ձևավորված «կիսաշրջան հատակագծով բավականաչափ լայն ու բարձր կամարակապ որմնախորշերը, որոնք չեն հանդիպում VII դարին պատկանող որևիցե այլ հուշարձանում»<sup>26</sup>:

Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմտյան (գլխավոր) և հարավային: Տ. Մարությանի նկարագրությամբ և չափումներով՝ «Անկախ այն բանից, որ տաճարի արևմտյան դուռը լայն է հարավային դռնից (համապատասխանաբար 155 սմ և 123 սմ), նրանք մշակված են միաձև: Մուտքերի աջ և ձախ կողմերում 48 սմ ընդհանուր լայնքով, 35 սմ առաջացած պատերի ճակատներին ձուլված, իրենց խարիսխների վրա բարձրանում են քսանական սմ տրամագծով զույգ կիսասյուներ (միմյանց միջև ունենալով 7-8 սմ ազատ տարածություն)»<sup>27</sup>:

Թե՛ արևմտյան, թե՛ հարավային շքամուտքերը հարդարված են տիպիկ հայկական ճարտարապետության բնութագրիչներով՝ երկու կողմից որմնասյուներով, որոնց խոյակները իրար են միանում գեղեցիկ կամարներով: Դրանցից ցած տեղադրված են կիսաշրջանաձև բարավորները՝ կերտված միակտոր մեծ քարերից: Երկու շքամուտքերի հեղինակն էլ հուներեն A տառի նմանություն ունեցող նշանով վարպետն է: «Բուռ դռները ուղղանկյունի են»<sup>28</sup>:

Աստծու գառնահովտյան տուն մտնողն իրեն անմիջապես զգում է թեթևացած, հոգեպես բավարարված. «տաճարի ներքին տարածությունը հոյակապ է, տպավորիչ, այն ընդարձակ է, բարձր, ձևերը՝ հստակ և կանոնավոր, առատորեն լուսա-

<sup>26</sup> Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 141:

<sup>27</sup> Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 53:

<sup>28</sup> Նույն տեղում:



վորված, այստեղ ամեն ինչ իրականացված է զգացումով, սիրով»<sup>29</sup>:

Առհասարակ, «Գառնահովտի հատակագծում առկա է նախանձեղի կանոնավորություն, մի բան, որ չենք տեսնում մյուս հուշարձաններում: Այստեղ արևելյան և արևմտյան խորաններն ունեն նույն՝ 416-417 սմ լայնքը, հյուսիսային և հարավային խորանները համապատասխանաբար 317 և 310 սանտիմետր լայնք: Երեք քառորդ խորշերի տրամագիծը ամենուրեք 255-257 սմ է, անկյունային սենյակները լիակատար քառակուսիներ են, որոնց կողերն ունեն 273-276 սմ չափեր: Նույն՝ 462-464 սմ լայնքն ունեն արևելյան և արևմտյան նախախորանները: Բոլոր ութ որմնամուկներն ունեն նույն՝ 80-82 սմ լայնքը»<sup>30</sup>:

Ինչպես տեսնում ենք, արևելյան ու արևմտյան խորանները հյուսիսայինի և հարավայինի համեմատ ավելի լայն են ու խորը, նաև բարձր: Դա մշակված է այն դիտավորությամբ, որ եկեղեցի մտնող հավատավորն ուղղորդվի դիպի Ավագ խորան, ուշադրությունը կենտրոնացնի Ս. Սեղանի վրա՝ տեսնելու և մասնակից դառնալու արարողությանը:

Ավագ՝ արևելյան խորանի բեմը բարձր է, ուր սրբարանի սպասավորները բարձրանում են հյուսիսային և հարավային կողմերից երեքական աստիճաններով: Դրանք խորհրդանշում են Սուրբ Երրորդությունը, ինչպես նաև դեպի Գողգոթա (բեմ) Խաչելության (Սուրբ Սեղան) տանող Փրկության շավիղներն են: «Ի տարբերություն մյուս տաճարների, Գառնահովտում արևելյան խորանի առջև առկա է “դաս” կոչվող հարթակը, որը մինչև տաճարի կենտրոն հասնող մի կիսաշրջանաձև տարածություն է, ընդհանուր հատակից բարձրացած տասը սանտիմետրի սահմաններում»<sup>31</sup>: Բոլոր չորս խորանների ու նույնքան 3/4 խորշերի զմբեթարդների ներքևներին տարբեր գույների քարերի շարվածքով պատկերված են ճառագող արևներ: Հատկապես բարձարվեստ ու ար-

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>31</sup> Նույն տեղում:

տաՀայտիչ են արեւմտյան և արեւելյան խորանների ճառագայթող արեւապատկերները, որոնք արված են սև, կարմիր, գորշ գույների քարերի բարձրաճաշակ համադրությամբ: Արեւաքանդակների սկավառակները պատկերված են կիսազնդով, ինչը խորհրդանշում է մշտասպասված ծագող արևը:

Տիրան Մարությանը եկեղեցու ներքին տարածության կազմակերպման կարևոր տարրեր խորաններից հետո համարում է «3/4 խորշերը, որոնք Գառնահովտում բավական մեծ են, սակայն իրենց բացվածքի գուսպ չափերով և վերնամասի յուրովի լուծմամբ որևէ չափով չեն խոչընդոտում կարևոր մասերի՝ խորանների լիակատար հնչեղությանը ներքին ընդհանուր տարածության ներդաշնակության մեջ»<sup>32</sup>: Գիտնականի պարզաբանմամբ՝ «երեք-քառորդ խորշերի գլխավոր դերը... անցման ռացիոնալ կազմակերպումն է տաճարի կենտրոնական տարածության և անկյունային սենյակների միջև»<sup>33</sup>: Օտարազգի ճարտարապետները, ինչպես նշում է հետազոտողը, թյուր են ըմբռնել 3/4 խորշերի գործառութային նշանակությունը՝ այն համարելով գմբեթային փոխանցման համակարգի անկապտելի մաս, և քանի որ Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցում դրանք թեքվածության պատճառով, ըստ նրանց, չեն ծառայել բուն նպատակին, հետևապես հանիրավի մեղադրել են ճարտարապետին՝ նրան անվանելով գավառական, պակաս գրագետ, ողջ շենքի կառուցողական համակարգի իմաստը չընկալած, երեք-քառորդի նպատակը չհասկացող, միջակ կարողությունների տեր վարպետ, առաջաստային անցման փոխարեն հին տրոմպայինի կիրառող, ոչ բավարար փորձառու և այլն<sup>34</sup>: Տ. Մարությանն արդարացնում է ճարտարապետին՝ բացատրելով, որ «3/4 խորշի մոտիվը սկզբնապես հայտնագործվել է նախ և առաջ որպես կազմակերպված անցում տաճարի ներսից դեպի անկ-

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 60:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 60-61, Գ. Чубинашвили, Разыскания по армянской архитектуре, էջ 16, 19, 25, 27, 28, 35, Н. Токарский, Архитектура Армении IV-XIV, էջ 126-127:

յունային սենյակները: Այս դեպքում ամենեւին նշանակութիւն չի ունեցել 3/4 խորշի բացվածքի այս կամ այն չափի թեքվածութիւնը, ինչպես և անհրաժեշտ չի համարվել խորշի վերնամասի մասնակցութիւնը գմբեթային փոխանցման համակարգում»<sup>35</sup>:

Երեք-քառորդ խորշերից մտնող ավանդատները, ինչպես կանխավ ասվել է, ամբողջովին քառակուսի սենյակներ են և «իրենց արևելյան պատի վրա չունեն խորանաձև կտրացումներ: Հարավ-արևելյան սենյակի հյուսիսային պատի վրա կա քառակուսի փոքր խորութեան խորշ, հյուսիս-արևելյան սենյակի հարավային պատի վրա նույնպիսի մի խորշ, որի հատակը, սակայն խորանում է հոծ պատի ներսում, ենթադրել տալով, որ այն եղել է գաղտնարանի-գանձարանի նման մի բան... Անկյունային սենյակներից արևելակողմիններն ունեն երկուական, արևմտակողմինները՝ մեկական պատուհան (արևմտյան պատի վրա): Պատուհանները դեպի ներս առանձնապես շատ չեն լայնանում»<sup>36</sup>: Երկու ավանդատների առաստաղներին պատկերաքանդակված են տարբեր խաչերի յուրօրինակ համադրութիւններ, որոնք տեղացիների ասելով՝ իրենց հեռավոր գուգահեռներն ունեն Երուսաղեմի տաճարի համանման հարդարանքների հետ:

Ս. Գևորգ եկեղեցու ներսը եղել է սվաղված, որից պահպանվել են հետքեր: Դա նշանակում է, որ եկեղեցու պատերին պատկերված են եղել որմնանկարներ, մի բան, որ տարածված էր հայոց վաղմիջնադարյան եկեղեցիներում մինչև Հայաստանում արաբական տիրապետութեան վերջնական հաստատումը (VIII դ. սկիզբ), երբ մերժվում էր պատկերահարգութիւնը: Ենթադրելի է, որ Գառնահովտի եկեղեցու որմնանկարների հիմնական թեմատիկան եղել է վիշապասպան Սուրբ Գևորգ Զորավարը՝ սպիտակ ձի հեծնած, նիզակը ձեռքին՝ թավազալար վիշապին խոցողիս:

Տաճարն ունի ձայնային հզոր հնչեղութիւն: Պատճառը ժամանակին որպես գաղտնարաններ օգտագործված շրջանա-

<sup>35</sup> Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 62:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 51-52:

ձև դատարկ տարածություններն են, որոնք առաջացել են խորանների գմբեթաբղ ծածկերի վերևում՝ երկթեք տանիքների տակ, որտեղ խաչաթևերն իրենց վերնամասում ավարտվում են ճակտոններով<sup>37</sup>: Եկեղեցին այդ առումով նույնպես եզակի է: Գաղտնարանների ընդհանուր թիվը տասներկուսն է, ինչը խորհրդանշում է առաքյալներին: Վ. Հարությունյանի պարզաբանմամբ՝ որպես թաքստոցներ ծառայած այդ դատարկ մասերն արվել են նաև «շինանյութի խնայման ու շենքի քաշի թեթևացման նպատակով»<sup>38</sup>:

Գառնահովտի եկեղեցու «չորս թևերի խաչմերուկի վրա վեր է բարձրանում մի շքեղ գմբեթաթմբուկ, այն եզակիներից մեկը, որ անաղարտ պահպանվում է կառուցման օրվանից ի վեր»<sup>39</sup>: Մասնագետները նկատել են, որ ճարտարապետը Գառնահովտի եկեղեցու գմբեթը կապելիս՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին մի քանի մանրամասներում կրկնել է 6-8 կմ հեռավորությամբ գտնվող Մաստարայի Ս. Հովհաննես տաճարի գմբեթաթմբուկի ձևերը<sup>40</sup>, բայց որոշ դեպքերում տալով այլ լուծումներ: Այսպես, թմբուկը Գառնահովտում, ինչպես և Մաստարայում ութանիստ է, որոնք պսակված են «կամարիկավոր քիվով»<sup>41</sup> և անկյուններում ավարտվում են եռանկյունաձև խորշերով: Բայց եթե խորշերը Մաստարայում ուղղահայաց ձգվում են վերից վար ամբողջությամբ, ապա Գառնահովտում դրանք, չհասած թմբուկի քիվին, ավարտվում են կորած զմբեթաբղով: Դրանով ճարտարապետն ապահովել է ամբողջ հուշարձանի արտաքին տեսքի բարձրաճաշակ ներդաշնակութունը՝ որմնախորշերին, անկախ չափերից, տալով միևնույն ավարտուն ձևը: Գմբեթի պատուհանների թիվը Մաստարայում ութն է՝ բացված յուրաքանչյուր

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 55:

<sup>38</sup> Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 141:

<sup>39</sup> Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 62:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 57: Նաև՝ Աշ. Մանուչարյան, Լ. Աղաջանյան, Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցի, Церковь Св. Иоанна в Мастаре, The Church of St. John of Mastara, եր., 2019, էջ 4:

<sup>41</sup> Վ. Հարությունյան, նույն տեղում:



506038

նիստին մեկական: Գառնահոլտում թմբուկի պատուհանները 12 հատ են: Դրանով ճարտարապետը լուծել է երկու խնդիր. ապահովել է զգալի լույսի ավելի առատ ներթափանցումը տաճար, և հոգևոր իմաստով՝ Հիսուս Քրիստոսի երկրային տանը աստվածային առաքելաքարոզ լույսի մշտնջենական ներկայության առկայություն: Գառնահոլտում 12 առաքյալների թվով պատուհանները, որոնք բոլորը վերևներում ունեն աղեղնապսակներ, դասավորված են այն իմաստով ու նշանակութամբ, որ չորս ճակատային նիստերին բացված են երկուական, որոնք ոչ միայն անհափ ներդաշնակ են կառույցի այդ հատվածների լուսամուտներին ու որմնախորշերին, այլև աստվածաբանորեն ու եկեղեցաբանորեն խորհրդանշում են Հիսուս Քրիստոսի այն չորս զույգ գլխավոր աշակերտներին, որոնք հարազատ, արյունակից եղբայրներ են (Ս. Պետրոս+Ս. Անդրեաս, Ս. Հովհաննես Ավետարանիչ+Ս. Հակոբոս Ավագ Զեբեդյան, Հայոց առաքյալ Ս. Թադեոս Ղեբեոս+Ս. Հակոբոս Կրտսեր Ալփյան, Ս. Թովմա+Ս. Թադեոս Երկվորյակ<sup>42</sup>): Մնացած չորս նիստերին էլ բացված են մի քիչ ավելի փոքր մեկական պատուհաններ, որոնք էլ խորհրդանշում են Հայոց երկրորդ առաքյալ Ս. Բարդուղիմեոս Նաթանայելին, Ս. Փիլիպպոսին, Ս. Մատթեոս Ավետարանչին, Ս. Սիմեոն (Շմավոն) Նախանձահույզին:

Գառնահոլտում, ինչպես և Մաստարայում, գմբեթային համակարգին անցումն իրականացված է տրոմպային եղանակով:

Գառնահոլտի գմբեթն ավարտվում է կորնթարդով, որով այն ստացել է կլոր, գնդաձև տեսք: Վ. Հարությունյանի մանրամասնմամբ՝ «Կղմինդրների չափերի փոքրությունը հնարավորություն է ընձեռել ծածկել կոր մակերևույթներ: Այդ պատճառով էլ Հայաստանի վաղմիջնադարյան եկեղեցի-

<sup>42</sup> Ծի'շտ է՝ մատնիչ Հուդա Իսկարիովտացու փոխարեն որպես տասներկուերորդ առաքյալ վիճակահանությունը ժամանակավորապես ընտրվել է Մատթիան, բայց նրա հետ հավասար էր Թադեոս Երկվորյակը Հիսուս Քրիստոսի 70 (72) աշակերտների մեջ:

ների զմբեթները նաև արտաքուստ սփերիկ (կլոր, գնդաձև-Ա. Մ.) ձև ունեին»<sup>43</sup>:

Ամբողջ հուշարձանը կերտված է կարմիր տուֆից, տեղ-տեղ օգտագործված է նաև սևը:

Եկեղեցու պատերին IV դարի քանդված սրբարանից ագուցված են պատկերաքանդակներ, որոնք չափերով ավելի խոշոր են: Մասնավորապես, արևմտյան ճակատի հյուսիսային հատվածում՝ պատուհանից ցած, վերաչարված են V դ. բնորոշ երեք հավասարաթև խաչեր՝ ներառված շրջանների մեջ: Դրանք բնորոշում են Սուրբ Երրորդությունը: Իսկ նույն ճակատի հարավային մասում վերաչարված են երեք հավերժություն նշաններ՝ ներառված վեցանիստ շրջանակների մեջ: Նրանցում նույնպես Սուրբ Երրորդության խորհուրդն է: Արևելյան պատին՝ լուսամուտից ներքև, ևս ագուցված են երեք հատ հավասարաթև խաչեր՝ շրջանի մեջ:

Հուշարձանն ուսումնասիրած ճարտարապետները զգալի բազմազանություն են նկատել «նաև քիվերի ձևերում, ընդ որում տարբեր ճակատներում նրանք ունեն տարբեր մշակումներ: Ուշագրավ է, որ կամարիկներով մշակված քիվը շրջանցել է կառուցվածքի արևելյան կեսը, իսկ բուսական ռմավորված զարդաձևերով մշակված քիվը՝ արևմտյան կեսը»<sup>44</sup>:

Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցու կառուցման ժամանակը. Այդ կարևոր հարցի շուրջ մասնագետներն ունեն տարակարծություններ. Տ. Մարությանը հակված է VI-VII դարերի սահմանագծին<sup>45</sup>, Գ. Հովսեփյանը թվագրում է VII դ. սկզբով<sup>46</sup>, Ն. Տոկարսկին՝ VII դ. 1-ին -2-րդ կեսով<sup>47</sup>:

<sup>43</sup> Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 108:

<sup>44</sup> «Հայկական ճարտարապետություն պատմություն», ԳԱԱ հրատ., հ. 3-րդ, Եր., 2004, էջ 104, այսուհետ՝ ՀԺՊ և էջը:

<sup>45</sup> Տե՛ս Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 63:


<sup>46</sup> Տե՛ս Գ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ Գ., Նիւ Եորք, 1944, էջ 51:

<sup>47</sup> Տե՛ս Н. Токарский, Архитектура Армении IV-XIV вв., էջ 129, Архитектура древней Армении, էջ 89:

Մեր կարծիքով՝ ամենաճիշտը Թ. Թորամանյանն է՝ VII դ. կես<sup>48</sup>:

Ս. Գևորգ եկեղեցու ճարտարապետը. Տ. Մարությանն այդպես մանրամասն նկարագրելով ու վերլուծելով եկեղեցին՝ հանգում է հետևյալ եզրակացության. «Հայտնի է, թե երբ և ով է կառուցել Գառնահովտի սուրբ Գևորգ տաճարը: Մատյաններում այդ մասին ոչինչ էի ասվում»<sup>49</sup>: Փոխարենը զաղտնիքը հայտնում են քարեղեն մատյանները. Ալ. Մանուչարյանը միանգամայն իրավացիորեն համարում է, որ արևմտյան պատին երկիցս֊փորագրված ՎԱՐԴԵՍ հիշատակագրությունը եկեղեցու ճարտարապետի անունն է<sup>50</sup>:

Ընդ որում, Վարդէս անունն առաջին անգամ հավերժացվել է գլխավոր՝ արևմտյան շքամուտքի վերևի պատուհանի հյուսիսային մասում, որտեղ այն VII դ. բնորոշ խաչապատկերի երկու կողմերում փորագրվել է երկվանկ փակագիր ձևով, բայց երևի մտավախություն է եղել, որ գուցե հետագայում չկարողանան ճիշտ վերծանեն, դա նույն լուսամուտի հարավային հատվածում V դ. նմանակված խաչի կողքերին գրվել է ամբողջությամբ՝ տառ առ տառ.



Նկ. 5. Ճարտարապետի անվան փորագրությունները

Рис. 5. Надписи имени архитектора

Pic. 5. Carved letters of the architect's name

<sup>48</sup> Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Ժող. 1-ին, էջ 246, 248:


<sup>49</sup> Տ. Մարության, նշվ. աշխ., էջ 63:

<sup>50</sup> Տե՛ս Ալ. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 80:



Այն գիտնականները, որոնք Գառնահովտի ճարտարապետին համարում են գործած VII դ. կեսից շուտ, հիմք են ընդունում մի պատճառաբանություն, թե իբր նրան ծանոթ չի եղել արդեն հայ ճարտարապետության մեջ այդ հարյուրամյակում կիրառվող զմբեթային անցման նոր առաջատային եղանակը, այլապես նա Ս. Գևորգում չէր օգտագործի փոխանցման հին տրոմպային ձևը: Պատասխանը հետևյալն է. լավագույնը փորձված հինն է: Վարդեսը քաջ գիտեր, որ հարևան Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու հսկա զմբեթը, որքան էլ հիմնադրումից հետո տուժել էր կառույցը, այնուհանդերձ, այն լեռնային գոտում շուրջ 200 տարի անխաթար դիմագրավել էր ժամանակի հարվածներին: Հետևապես, խելամիտ կլինի կիրառել անցումնային նույն եղանակը: Ավելի քան 1350 տարիները ցույց են տվել, որ Վարդես ճարտարապետը ճիշտ էր:

Հայ ճարտարապետության ուսումնասիրության երախտավոր Թորոս Թորամանյանը, մանրակրկիտ ուսումնասիրելով Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցին, տաճարի պատերին գտել է քարգործ վարպետների 12 նշան, որոնցից 1-ը հունարեն Α տառի նման, 5-ը՝ զծանկարային, 6-ը՝ հայատառ<sup>51</sup>.



Եվս չորս վարպետի տառային նշան գտնվել է մեր կողմից՝ Յ, Վ, Ե, Թ:

<sup>51</sup> Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, ժող. 2-րդ, էջ 162:

## ԳԱՌՆԱՀՈՎԻՏԸ ԵՎ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Գյուղի բուն հայկական հնանունը, ցավոք, հայտնի չէ:

Գառնահոովիտ կոչվել է XX դ. կեսին: Մինչ այդ անվանվել է թուրքացված ձևով՝ Ադիաման-Adi Aman, որ երբեմն արտասանվել է նաև Adi Yaman: Վերջինս առհասարակ կապ չունի բուն բառիմաստի հետ: Այստեղից էլ ենթադրել են, որ գյուղի հին անունը եղել է Կոթ: Բայց մենք կարծում ենք, որ Ադիաման գյուղանվան հիմքում ոչ թե թուրքերեն անվանում է ընկած, այլ արաբերեն՝ مان  $\bar{a}$   $\bar{y}$   $\bar{a}$  = Ադդ ալ-Աման, որ թարգմանվում է՝ Տալ անվտանգություն<sup>52</sup> = Անվտանգություն տվող, այսինքն՝ ապահով վայր:

Տարաբախտաբար, թե՛ մատենագրության մեջ, թե՛ Անի-Շիրակ-Արագածոտնի՝ մեզ հայտնի վիմագրերում չի հանդիպում մի գյուղանուն, որ իմաստով մոտ լինի անվտանգություն արտահայտություն: Չի գտնվել նաև Կոթ կամ Կոթի տեղանուն:

Չի բացառվում, որ արաբերեն նախապես հնչել է՝ الضمان = Ադդաման = անվտանգություն, ապահովություն, երաշխավորություն<sup>53</sup>, այստեղից էլ՝ = Անվտանգության երաշխավորություն տվող, այսինքն՝ Երաշխավոր: Այդ անվամբ վանք հայտնի էր Տուրուբերան նահանգի Բզնունյաց գավառում, որի վանահայր Արտավազդ վարդապետը VIII դ. զրի է առել Սուրբ Վահան Գողթնացու վարքը<sup>54</sup>: Երաշխավորք (Երաշխավորս) է կոչվել նաև Երազգավորս (Շիրակավան) քաղաքը Շիրակում<sup>55</sup>, որը IV-VIII դդ. պատկանել է Կամսարականներին: Սակայն քաղաքանունը չի ծագում երաշխիք բառից, ինչպես բանավոր մեզ պարզաբանել է Արծ.

<sup>52</sup> Տե՛ս X. Баранов, Арабско-русский словарь, М., 1977, էջ 29, 45:

<sup>53</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 463:

<sup>54</sup> Տե՛ս Աշ. Մանուչարյան, Ս. Վահանի ճգնարանը Կարմրաշենում, «Տարեգիրք», Ե, ԵՊՀ աստվածաբանության ֆ-կ, Եր., 2010, էջ 208:

<sup>55</sup> Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Եր., 1988, էջ 212:

Սահակյանը, այլ կապված է Երասխ գետանվան հետ, որի «ս»-ն հնչյունափոխվել է «շ»-ի:

Շատ կարևոր մանրամաս է հաղորդում Ղ. Ալիշանը՝ հայտնելով, որ Կամսարականները IV դարում Արևելյան Հայաստանում իրենց տոհմի կոտորածից հետո Տայք նահանգի Թորթոմի շրջանում կայսերապարզե գյուղ են ստացել՝ Երաշխուտ (ընդգծումը մերն է-Ա. Մ.) անվամբ, որը հետագայի Խաշուտն է<sup>56</sup>: Արդյո՞ք սպանդից փրկված Կամսարական իշխանն այդ նոր գյուղը չի անվանակոչել ի հիշատակ իրենց շիրակյան բնակավայրի, որն անապատառնակ արաբները, արտասանության դյուրության համար, հնչեցրել են Թարգմանաբար՝ Ադղաման, իսկ դարեր հետո Արևելքից մեր տարածաշրջան հեղեղի նման ներխուժած քոչվոր ոչխարապահ ցեղերն իրենց խոսվածքով այն թյուրքափոխել են *Adi Aman*-ի կամ *Adi Yaman*-ի:

Երաշխավոր՝ անվտանգության երաշխիք տվող իմաստը լիովին հարիր է Գառնահովիտ գյուղին: Այն հարավից և արևելքից պաշտպանված է եղել բլուրների վրա կառուցված քառակարգ ու կրկնապարիսպ ամրոցներով, որոնք համապատասխանաբար թվագրվում են Ք. ա. II-I հազարամյակներով: Գառնահովիտն այդ հեռավոր ժամանակներում, ըստ Թ. Թորամանյանի, եղել է բերդաքաղաք, «որի այժմ հետքերը միայն որոշ կերևին: Իսկ դեպի արևմուտք քաղաքատեղիի եզերքից դեպի ցած մի դժվարամատչելի զառիվայր է մինչև այժմյան գյուղի ներքև, ուր կգտնվին գյուղի վարելահողերը... Քաղաքատեղիի արևելյան կողմի վրա կսկսի մի ձոր և անչափ կխորանա դեպի Հյուսիս, որով բերդաքաղաքի Հյուսիսային մասը ևս անառիկ դիրք կստանա»<sup>57</sup>:

Այսպիսով, տեսնում ենք, որ Գառնահովիտը վաղնջական ժամանակներում բոլոր չորս կողմերից պաշտպանված խոշոր

<sup>56</sup> Տե՛ս Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 6: Ալիշանի մոտ կան ճշտություններ. IV դ. 60-ական թթ. Տայքի տերերը ոչ թե բյուզանդացիներն էին, այլ՝ Մամիկոնյանները, որոնք էլ շնորհել են Երաշխուտն իրենց ազգական Կամսարական իշխանին:

<sup>57</sup> Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, ժող. 1-ին, էջ 21-22:

բնակավայր է եղել: Թ. Թորամանյանի գնահատմամբ՝ Գառնահովիտը նախնադարյան այն եզակի բերդաքաղաքներից մեկն է, «որ մինչև քրիստոնեական թվականը հասել և այս կողմը մի քանի դար միևնույն տեղում չեն մնացել են: Ուրիշ նախաքրիստոնեական ամրոցներում և բերդաքաղաքներում տեսել ենք, որ դեռ քրիստոնեական թվականի նախօրյակին շատերը լքել են բերդ, ամրոց և քաղաք ու գաղթել են ուրիշ տեղեր կամ նոր քաղաք են հիմնել: Բայց, ինչպես երևում է, Ադյամանի մեջ նույն բանը չէ տեղի ունեցել. քաղաքի բնակիչները մոտիկ տեղափոխությամբ մնացել են այդտեղ, չեն պահել են քաղաքը և շրջանները, և քաղաքի մեջ (այժմ Ադյաման գյուղ) 7-րդ դարում մի հոյակապ եկեղեցի են շինել, որ կարելի է համեմատել Թալինի մեծ կաթողիկեի, Մրենի և այլ նման մեծագործությունների հետ»<sup>58</sup>:

Տրդատ Մեծ արքան (286-330) Նիկիայի Ա. տիեզերածոդովից՝ 325 թ., հետո Երասխաձոր ու Շիրակ գավառները շնորհում է իր սանիկ, պահլավիկ Կամսարին: Վերջինիս մահից հետո երեց որդին՝ Արշավիրը, ստանձնում է տոհմի ավագությունը<sup>59</sup>: Կենտրոնը՝ Անանիա Շիրակացուն Սահակ Կողայնի հղմամբ, եղել է Մարմատը (Երվանդաշատը)<sup>60</sup>: Արշավիր Կամսարականը, ըստ պատմահոր, այնքան շատ էր սիրում Երասխաձոր գավառը, որ այն իր անունով կոչում է Արշարունիք<sup>61</sup>: Ենթադրելի է, որ Շիրակն էլ որպես ավատական տիրույթ տրվել է Կամսարի կրտսեր որդի Ներսեհին, ում պատկանել է նաև ներկայիս Գառնահովիտ գյուղը, քանի որ

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>59</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն/Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի: Աշխարհաբար թարգմ. և մեկնաբան. Ստ. Մալխասյանցի, Եր., 1981, էջ 295: Արշավիր Ա. Կամսարականը եղել է IV դ. 30-50-ականների Հայաստանի ռազմաքաղաքական նշանավոր գործիչներից մեկը. 338 թ. պարսիկների դեմ պատերազմում Վաչե Մամիկոնյանի զոհվելուց հետո նրան է վստահվել սպարապետության պաշտոնը, որով նա դարձել է երկրում թագավորից հետո առաջին պատվավոր անձը (տե՛ս նույն տեղում, էջ 321):

<sup>60</sup> Տե՛ս Ս. Կոզեան, Կամսարականները. "Տեսքը Շիրակայ եւ Արշարունեաց", Վիեննա, 1926, էջ 22:

<sup>61</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, նույն տեղում:

այն պատմականորեն ներառված է եղել այդ գավառի կազմում:

Երբ Հայոց Մեծաց կաթողիկոս Ներսես Ա. Պարթևը Սուրբ Գևորգի մասունքները բերել է Հովհաննավանք, ինչպես առաջաբանում ակնարկել ենք, Ներսես Կամսարականը Հայրապետից ստացել է Զորավարի նշխար և իր իշխանապատկան Գառնահովտում հանուն նրա կառուցել եկեղեցի, որը, ըստ ավելի վաղ ասվածի, գտնվել է ներկայիս տաճարի արևմտյան մասում:

Պատմության մեջ Ներսես Ա. Կամսարականի անունը կապվում է Հայոց Արշակ Բ. արքայի (345-368) կողմից իր Թագավորության սկզբներին Արարատ լեռան թիկունքին հիմնադրված Արշակավան քաղաքի կործանման հետ 358 թվականին<sup>62</sup>: Ներսեսը գլխավորել է նախարարական զորքերի հարձակումն այդ քաղաքի վրա, որտեղ Արշակ Բ.-ի կոչով ու զանազան արտոնությունների տրամադրմամբ բնակություն էին հաստատել պարտապաններ, վարկառուներ, խաբեբաներ, գողեր, մարդասպաններ, իրենց տերերի մոտից փախած ծառաներ, վնասարարներ, ամեն տեսակի հանցագործներ<sup>63</sup>: Նկատելի է, որ եղբոր՝ Արշավիրից հետո Ներսեսը դարձել էր «Տէր Շիրակայ եւ Արշարունեաց»: Նախարարները հիմնահատակ կործանեցին Արշակավանը, սրի քաշեցին բոլոր բնակիչներին, բացի ծծկեր երեխաներից, որովհետև կատաղած էին իրենց ծառաների և վնասարարների դեմ<sup>64</sup>: 363 թ. Արշակ Թագավորը վրեժխնդիր է լինում իր անվամբ հիմնադրված քաղաքի ավերման համար՝ սրատելով գլխավոր նախաձեռնողներին, հատկապես ընաջինջ անելով Կամսարական տոհմը՝ չխնայելով անգամ կանանց ու երեխաներին, իսկ

<sup>62</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. II, եր., 1984, էջ 634 (այսուհետև՝ ՀԺՊ, II և էջը):

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 349, Փափստոս Բուզանդ, Հայոց պատմություն/ [Բնագիրը՝ Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի], եր., 1987, էջ 169, ՀԺՊ, II, էջ 89, 97:

<sup>64</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 349-351:

ներանց տիրույթները՝ կցում արքունիքին: Ոչ ոք չփրկվեց, բացի Արշավիր Ա. Կամսարականի որդի Սպանդարատից<sup>65</sup>:

Գառնահովիտ գյուղը, բացի Ս. Գևորգ փառահեղ եկեղեցուց, հայտնի է նաև անդուգական վաղմիջնադարյան կոթողով, որը պահպուսում է Սարգարապատի թանգարանամերձ հրապարակում<sup>66</sup>, իսկ կրկնօրինակը՝ ՀՊՊԹ-ի մուսուքի մոտ:

Այդ յուրօրինակ կոթողին անդրադարձել են մի խումբ գիտնականներ, բայց թվագրության ու պատկերաքանդակների նրանց վերլուծություններում տակավին կան վերջնական պատասխանների կարոտ հարցեր:

Կոթողն առաջինն ուշադրության է արժանացրել Թորոս Թորամանյանը, երբ այն նկատել է Գառնահովիտ գյուղի մոտի վաղմիջնադարյան գերեզմանոցում, որն անվանի ճարտարապետը համարում է նախաքրիստոնեական հանգստարան<sup>67</sup>: Ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանի նկարագրությամբ՝ կոթողը բավականին մեծ չափերի է, «որի վերին մասը ջարդված է: Մնացած բեկորի բարձրությունն է 1, 65 մետր, մի կողմ 0, 50 մետր, մյուս կողմ 0, 60 մետր: Համեմատելով նման կոթողների հետ և ելնելով երեսների լայնության չափերից ու քանդակներից՝ կարելի է ենթադրել, որ ամբողջական կոթողի բարձրությունը եղել է մոտ երեք մետր և դեպի վեր քիչ նեղացել է»<sup>68</sup>:

Թ. Թորամանյանը քառակող կոթողը կարծում է հեթանոսական շրջանի արվեստի գործ<sup>69</sup>, առանց ուշադրություն դարձնելու առաջին նիստի աստվածաշնչյան պատկերաքանդակներին, որտեղ Մորիա սարի վրա (Ծննդ. 22. 1-13), ըստ Գարեգին Հովսեփյանի, «Աբրահամի զոհաբերութիւնն է:

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 357, Փավստոս Բուզանդ, էջ 203:

<sup>66</sup> Կոթողը 1970 թ. Գառնահովիտ գյուղից տարվել է Հայաստանի պատմության պետական թանգարան՝ ՀՊՊԹ: Այստեղից էլ այն 1979 թ. տեղափոխվել է Սարգարապատի թանգարան:

<sup>67</sup> Տե՛ս Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 23:

<sup>68</sup> Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում, Եր., 1949, էջ 49:

<sup>69</sup> Տե՛ս Թ. Թորամանյան, նույն տեղում:





Եռաստիճան պատուանդանի վերայ տնկուած է բունը եւ նորայ վերայ հաստատուած քառանկիւնի սեղանը, վերան նստեցրած ծալապատիկ ձեւով Իսահակը: Աբրահամը բարձրացրել է ձախ ձեռքը, բռնել զոհի գլխից կամ մազերից, իսկ աջը մեկնել, երեւի, սուրը ձեռքին... վիզը կտրելու համար: Իսահակի գլխից վեր երեւում է մի բան, որ Սաբեկայ ծառից կախուած խոյը պիտի լինի:

Աբրահամը հագել է մինչեւ ոլոքները հասնող բաճկոն եւ ուսերին ձգել երկար, բիւզանդական կոչուած տոգայ, որի վերին քղանցքները կախուած են ուսերից դեպի կուրծքը... Նորա գլխին եւս մի բան պիտի լինէր, որ եղծուած է, հաւանօրէն հրեշտակը, կամ Տիրոջ աջը, որ ցույց է տալիս ծառից կախուած խոյը:

Նկ. 6. Աբրահամի զոհաբերությունը  
Рис. 6. Жертвоприношение Авраама  
Pic. 6. Abraham's Sacrifice

Խմբանկարի տակ սովորական ականթն է, եռատերեւ, կողերի տերեւների կէսը միւս երեսներին անցած»<sup>70</sup>:

Գրիգոր Գրիգորյանը համամիտ է Թ. Թորամանյանին կոթողի հեթանոսական ծագման հարցում և կարծում է, որ Աբրահամի զոհաբերության տեսարանի առկայությունը դեռեւս հիմք չէ հուշարձանը քրիստոնեական համարելու համար: Նա մի շարք փաստարկների հիմամբ հայտնում է այն ուշագրավ տեսակետը, որ հրեաների նախահայր Աբրահամի պատմությունը հայտնի ու տարածված է եղել հեթանոսական Հայաստանում: Դա նախ հրեական ծագում ունեցող հզոր Բագրատունիների, Տիգրան Մեծի (Ք. ա. 95-55) կողմից

<sup>70</sup> Գ. վրդ. Յովսէփեան, նշվ. աշխ., էջ 113-115:

Հայաստան բերված մեծածիւղ հրեա գերեզմանների շնորհիվ: Ապա Գր. Գրիգորյանը կռվան է դարձնում Մովսես Խորենացու այն վկայությունը, որ ըստ Սուրբ Գրքի, Աբրահամ նահապետից է առաջ եկել պարթևների ցեղը, որի ներկայացուցիչ Վաղարշակը (Ք. ա. II դ.), դառնալով Հայոց թագավոր և Արմավիրում կառուցելով մեհյան, արձաններ է կանգնեցնում արեգակին, լուսնին և իր նախնիներին (պարզ է՝ նաև Աբրահամին ու Իսահակին-Ա. Մ.), որոնց պաշտամունքը փաստորեն մտցնում է Հայկական պանթեոն<sup>71</sup>: Այո՛, Աբրահամն ու Իսահակը կարող էին պաշտվել հրեական միջավայրում, Հայոց պարթևական արքունիքում, Բագրատունիների վաղ ժառանգական Հայրենիք Սպեր գավառում,



որը գտնվում էր Արևմտյան Հայաստանում, բայց ոչ Հայկ նահապետի անմիջական սերունդների բնակություն վայրերում, վերջիններիս թվում՝ նաև Գառնահովտում:

Կոթողի երկրորդ նիստին, ըստ Բ. Առաքելյանի, «ներքևում քանդակված է նույնպիսի ականթատերև կենտրոնական փնջով, քիչ վերևում դարձյալ ականթատերևներ փոքր ինչ այլ կերպավորումով, կենտրոնում ցողուն, վրան բացված ծաղիկը...: Վերևում կանգնած է մի ֆիգուրա *en face*, որից պահպանված է գոտուց ներքևի մասը, հագին երկարած իտք կոշիկներ, գոգավոր փեշերով գոտեպինդ զգեստ և խոզազուլիս ֆիգուրաներին հատուկ վերարկու, աջ փեշը ծածկում

Նկ. 7. Կոթողի 2-րդ նիստը  
Рис. 7. Вторая грань стелы  
Pic. 7. The second side of stela

<sup>71</sup> Տե՛ս Գր. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Եր., 2012, էջ 87:

է ֆիզուրայի կողքը, երևում է վերարկուի կեղծ թևը»<sup>72</sup>:

Բ. Առաքելյանը կարծես ակնարկում է Տրդատ Մեծին, երբ խոզագլուխ դարձավ Հռիփսիմյանց կույսերի նախճիրից հետո: Ուրեմն այդ դեպքում արքայից վեր պետք է պատկերված լինե՞ր Գրիգոր Լուսավորիչը՝ լուսապսակով և Սուրբ գիրքը ձեռքին, ինչպես Թալինի վաղմիջնադարյան կոթողի վրա է<sup>73</sup>: Սակայն, կարծում ենք, ավելի ճիշտ Գ. Հովսեփյանն է, ով հավանական է համարում, որ պատկերվածը կարող է լինել ննջեցյալը<sup>74</sup>: Այս տեսակետին համամիտ է նաև Գր. Գրիգորյանը. նա ննջեցյալի ոտքերի ներքևում պատկերված բույսը համարում է մահվան ու վերակենդանացման գաղափարի խորհրդանիշ, սակայն եզրահանգում է, որ երկրորդ նիստի հորինվածքը ևս հեթանոսական է<sup>75</sup>:

Ննջեցյալի հագուստները վկայում են, որ նա եղել է բարձրաշխարհիկ անձ: Վարդան Հացունու պարզաբանմամբ՝ հայ իշխանների պատմուճանները ձգվում էին մինչև ծնկները, «ի բաց առեալ անոնք՝ որ թագաւորական արտօնութեամբ կը կրէին զպատմուճանն մեծ մինչև սրունից կեսը»<sup>76</sup>: Իշխանների զգեստի կարևորագույն բաղադրիչ էր համարվում գոտին, և «բոլոր նախարարք իրենց մէջքին կը պահէին զայն միշտ»<sup>77</sup>:

Անտարակույս, ննջեցյալը կամսարական տոհմի ներկայացուցիչ է, քանի որ նրանց ավատական տիրույթներում է գտնվել Գառնահովիտ գյուղը: Իսկ ո՞վ կարող է պատկերված լինել: Այդ հարցի պատասխանը հուշում է առաջին երեսի խմբապատկերի՝ Աբրահամի զոհաբերության պատմության առկայությունը կոթողի վրա: Թեման պատահական չի ընտրված. ննջեցյալը, որը, դատելով հագուստներից, հասուն մարդ է, ինչ որ ընդհանուր եզրեր ունի Աբրահամի ու

<sup>72</sup> Բ. Առաքելյան, նշվ աշխ., էջ 49:

<sup>73</sup> Տե՛ս պատկերաքանդակը՝ նույն տեղում, նկ. 23:

<sup>74</sup> Տե՛ս Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 116:

<sup>75</sup> Տե՛ս Գր. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 84-85:

<sup>76</sup> Վ. Հացունի, Պատմութիւն Հին Հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 117:

<sup>77</sup> Նույն տեղում, էջ 118:

Իսահակի հետ: Զոհաբերվող մանուկ Իսահակը փրկվում է Աստծու կամքով: Արշակ Բ.-ի կողմից բնաջնջվող Կամսարական տոհմից փրկվում է միայն Սպանդարատը: Ըստ Բուզանդի՝ Սպանդարատը փոքրիկ մանուկ է, որին փախցնում-փրկում է Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը (345-368)<sup>78</sup>: Խորենացին Սպանդարատին համարում է չափահաս, ավելին՝ ամուսնացած, կինը՝ Արշանու(յ)չը, Արշակունյաց տոհմից էր, ունեին երկու որդի, և իր հորեղբայր Ներսես Ա.-ից դժգոհ, հեռացել ու բնակվում էր կողակցի ժառանգական կալվածքում՝ Տարոնի և Հաշտյանքի կողմերում, դրա համար էլ հեռու լինելով՝ փրկվեց կոտորածից<sup>79</sup>:

Ս. Կոզյանն ավելի ընդունելի է համարում Փափստոս Բուզանդի հաղորդածը<sup>80</sup>, հավանաբար այն պատճառով, որ նա ժամանակով ավելի մոտ է ողբերգական իրադարձություններին, քան պատմահայրը: Ամեն դեպքում երկուսի մոտ էլ փրկվածը նույն անձն է՝ Սպանդարատը: Եթե զուգահեռում ենք կոթողի հետ, նա մանուկ է, ինչպես Իսահակը: Խորենացին, գուցե, ավելի առաջ գնալով է ներկայացրել Սպանդարատին, երբ նա ողբերգական իրադարձություններից հետո արդեն հասուն մարդ էր: Այն, որ փրկվածն իրոք Սպանդարատն է, հաստատվում է նաև նրա անվան հայեցի ստուգաբանությամբ: Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը Սպանդարատ անունն ստուգաբանում է պահլավերեն, որ նշանակում է «սրբատուր»<sup>81</sup>, իսկ ըստ Ֆերդինանտ Յուստիի ու Հայնրիխ Հյուբշմանի, որոնց հղում է Ս. Կոզյանը, «զոհի բարեկամ»<sup>82</sup>: Հայերեն ստուգաբանելու դեպքում՝ սպանդարատ բառն արտահայտում է սպանդի (կոտորածի) չենթարկվածի իմաստ: Հր. Աճառյանն արատ արմատը համարում է կորած (թեև այսօր այն մասամբ վերականգնված է, օրինակ՝

<sup>78</sup> Տե՛ս Փափստոս Բուզանդ, էջ 203:

<sup>79</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 357, 393:

<sup>80</sup> Տե՛ս Ս. Կոզյան, նշվ. աշխ., էջ 88:

<sup>81</sup> Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., եր., 1948, էջ 597:

<sup>82</sup> Տե՛ս Ս. Կոզյան, նշվ. աշխ., էջ 11:



լեզվական արատ; սրտի արատ, ունենալ արատներ և այլն-Ա. Մ.), «բայց կայ անարատ արմատը»<sup>83</sup>: Այսինքն՝ մեր տեսակետով՝ կոտորածից փրկվածի անունը նախապես հնչել է Սպանդարատ, որը կրճատվել ու պահպանվել էր ազդեցությամբ դարձել է Սպանդարատ: Վերջինս էլ, կարծում ենք, ոչ թե փրկվածի անունն է, այլ մականունը: Դրանով նա այնքան հայտնի է դարձել, գրանցվել պատմության էջերում, որ մոռացության է մատնվել նրա իսկական անունը:

Խորենացին պատմում է, որ Սպանդարատ Կամսարականը, Ձիրավի ճակատամարտում հերոսաբար կռվելով ու թշնամիներից Ղեկաց (լեզգիների) արքայ քաջ Շերգիրին հաղթելուց հետո, Հայոց Պապ թագավորից (369-373), որպես պարգև քաջության, ետ է ստացել հայրենի Արշարունիք ու Շիրակ գավառները<sup>84</sup>: Կամսարականների սպանդից անցել էր 8 տարի, և մանուկ Սպանդարատը, մեծանալով Վասակ սպարապետի դաստիարակության ներքո, անշուտ, պետք է տիրապետեր նաև մամիկոնյանական մարտարվեստի նրբություններին և դառնալով չափահաս, կարող էր լիովին մասնակցել 371 թ. Ձիրավի ճակատամարտին: Առհասարակ, հնում մանուկ նշանակել է երիտասարդ, պատանի<sup>85</sup>: Պատանին արքունքի հասակն էր, մոտավորապես 14-ից 20 տարեկանը<sup>86</sup>: Եթե ընդունենք, որ սպանդի ժամանակ Սպանդարատը փոքրիկ մանուկ էր, այսինքն՝ 10-12 տարեկան (մոտ այդքան էլ պետք է եղած լիներ Իսահակը), ապա Ձիրավում նա արդեն կլիներ 18-20: Տեր դառնալով հայրենական տիրույթներին և անշուշտ նստելով իր հայրական Մարմեստում՝ Սպանդարատ Կամսարականն ամռան տապին կնախընտրեր շոգ երասխաձոր-Արշարունիքից հեռանալ զով Շիրակ, որտեղ էլ՝ Գառ-

<sup>83</sup> Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 297:

<sup>84</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 371, 373:

<sup>85</sup> Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. III, Եր., 1944, էջ 255:

<sup>86</sup> Տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. IV, Եր., 1945, էջ 57:

նահովտում գտնվելով, վախճանվել է ու այդտեղ էլ թաղվել<sup>87</sup>:

Այն որ կոթողի երկրորդ կողին պատկերվածը ննջեցյալ է, հասկացվում է նրա ոտքերի ներքևում ականթատերևների մեջ բացված ծաղիկով, որի բոլորուն տեսքը նման է հավերթուկի խորհրդանշանին, ինչն ականարկում է հանգուցյալի հարուժյան և դրախտային հավիտենական կյանքին արժանանալու մասին:



Կոթողի երկրորդ նիստին իմաստային առումով լրացնում է երրորդ կողը:

Այստեղի պատկերաքանդակը թերևս ամենաառեղծվածայինն է: Ներքևում քանդակված են նախորդ երեսների նման ականթատերևներ, որոնց ետևում կանգնած է կին՝ երկար զգեստով, իրանը կիպ սեղմած գոտիով՝ կապը առջևից ներքև իջնող:

Նա գլխից վեր բարձրացրած ձեռքերով բռնել է կրկնափեղկ սեղանաձև շրջանակ, որի մեջ կան երկու՝ վեցաթև և ութաթև վարդյակներ:

Ըստ Գ. Հովսեփյանի՝ կնոջ գլխին կա գլխարկ, որի ձևն անորոշ է՝ եղծված

Նկ. 8. Կոթողի 3-րդ նիստը  
Рис. 8. Третья грань стелы  
Pic. 8. Third side of the stela

<sup>87</sup> Խորենացին հիշատակում է ևս մեկ Սպանդարատի՝ Արշարունյաց տեր, որը Ս. Սահակ Ա. Պարթև Հայոց կաթողիկոսին (387-439) աքսորից ազատելու ու հայրապետական աթոռին վերադարձնելու խնդրանքով 432 թ. մեկնել է Տիգրան Պարսից Վռամ (Բահրամ) Ե. Գոռ արքայի (421-439) մոտ (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 435, 437): Սպանդարատ անունը Ս. Կոբյանի դիտարկմամբ «ալլուր այնքան ցանցառաղէպ էր, որ Կամսարական տոհմին սեպհական անուններէն կարելի է համարիլ» (Ս. Կոբյան, նշվ. աշխ., էջ 17-18:)

լինելու պատճառով: Գիտնականը սեղանաձև շրջանակի միջի պսակաթերթերով վարդյակները հարցականով հաց է ենթադրում, «որ նուէր է մատուցանում, արդեօք վերելի անձնաւորութեան, որի ոտներն են միայն երեւում տարօրինակ կօշիկով (սանդալ): Մեզ համար միանգամայն մութ է քանդակի նշանակութիւնը»<sup>88</sup>: Միաժամանակ Հովսեփյանն այս երեսի պատկերաքանդակում տեսնում է հելլենական ձևակերպութիւնը<sup>89</sup>:

Լևոն Ազարյանը հնարավոր է համարում, որ «սա հեթանոսական թեմա է, գուցե որևէ աստվածուհի»<sup>90</sup>: Ըստ Ազարյանի՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանը սասանյան արվեստի աղբյւրութիւն է տեսնում, և քանդակը նրան հիշեցնում է Անահիտ դիցուհուն<sup>91</sup>: Իսկ Ասատուր Մնացականյանն էլ, Լ. Ազարյանի մեջբերմամբ, «այս քանդակը պտղաբերության ու դարնանային աստվածության պատկեր է համարում»<sup>92</sup>:

Այս հորինվածքը հեթանոսական է կարծում նաև Գր. Գրիգորյանը<sup>93</sup>:

Բոլոր տեսակետներն էլ մեզ համար ընդունելի չեն, քանի որ անտեսված է կամ յուրովի է ընկալված կոթողի քրիստոնեական-հինկտակարանյան ակունքը՝ Աբրահամի զոհաբերության տեսարանը:

Գ. Հովսեփյանի՝ հելլենական ձևակերպութիւն տեսնելը նույնպես հարիր է, քանի որ հեթանոսութիւնը՝ իր պաշտամունքային կառույցներով ու կուռքերով ոչնչացնելով մերժած քրիստոնեութիւնը, այն է վաղ միջնադարում, հին, ջախջախված կրօնին տեղ էէր տա:

<sup>88</sup> Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 116:

<sup>89</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>90</sup> Լ. Ազարյան, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975, էջ 65:

<sup>91</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>92</sup> Նույն տեղում: Աս. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 61-62:


<sup>93</sup> Տե՛ս Գր. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 86:



Բ. Առաքելյանի տեսակետը, որ պատկերվածը Տիրամայրն է<sup>94</sup>, ընդունելի կլիներ սրբապսակի առկայությամբ դեպում, որը չկա, մինչդեռ Հայաստանի վաղմիջնադարյան կոթողներում Աստվածածինը պատկերվում է լուսապսակով:

Վերջին տարիներս նոր տեսակետ է առաջ քաշել Ջարուհի Հակոբյանը, համաձայն որի՝ կինը «Սառան է, նրա ձեռքերում հացեր են՝ ըստ Աբրահամի հյուրընկալության պատմության»<sup>95</sup>: Հայտնի է, որ Սառան Իսահակին ունեցել է զառամյալ հասակում, հետևապես նա պետք է պատկերվեր ծեր տարիքին բնորոշ տեսքով, ինչպես ամուսինը՝ Աբրահամը, կոթողի առաջին նիստին, մինչդեռ կինն ունի երիտասարդի պիլկ մարմին:

Իսկ Առաքել Պատրիկն էլ իր հերթին փորձել է կնոջը պատկերել տարազով՝ հետևյալ վերարտադրությամբ<sup>96</sup>.



Մենք կարծում ենք, որ գեղեցկուհին Արշանուշ Արշակունին է՝ Սպանդարատ Կամսարականի կինը: Մարմինը ձգող գոտին, բացի կնոջ գեղեցկությունն ընդգծելուց, ցույց է տալիս նրա իշխանուհի լինելը: Կնոջ վեր պարզած ձեռքերով բռնած սեղանաձև շրջանակները խորհրդանշում են նրա և ամուսնու տապանները (վերջիններիս եզրերի թեքություններն ակնարկում են նրանց՝ մարդկային սովորական մեղքերից զերծ չլինելը), ու

Նկ. 9. Կնոջ պատկերի վերարտադրությունը

Рис. 9. Воспроизведение женского изображения

Pic. 9. Reproduction of the female depiction.

<sup>94</sup> Տե՛ս Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 50:

<sup>95</sup> Զ. Հակոբյան, Հայկական վաղմիջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր), Եր., 2016, էջ 74:

<sup>96</sup> Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Армянский костюм, Armenian national-costumes, Եր., 1983, էջ 36, տախտակ 11:

րոնք իշխանուհին դնելով ամենաողորմած Հիսուս Քրիստոսի ոտքերի տակ (պահպանվել են միայն ստորին հատվածները)՝ Բարձրյալից հայցում է երկրորդ Գալուստով Աստծո արքայությունում հավիտենական կյանք, որը խորհրդանշում են հավերժության գաղափարանիշ երկու վարդյակները, Սպանգարատի ու իր՝ Արշանուշի համար:

Այստեղից ենթադրելի է, որ կոթողի պատվիրատուն կինն է, և հուշարձանը կանգնեցվել է ոչ թե մեկ, այլ երկու հոգու՝ ամուսինների հիշատակի համար:



Ինչ վերաբերում է վերջին՝ չորրորդ նիստին, ապա այնտեղ պահպանված է՝ ներքևում, նույն ականաթերթը, որից վերև՝ ափսոսի մեջ, ամենաստորին մասում՝ կարճ պոչուկով եռանկյունաձև սլաք՝ դեպի վեր ուղղորդված:

Բ. Առաքելյանի մեկնաբանությամբ՝ «չորրորդ երեսի վրա մենք ունենք խաչի երկարաձիգ քանդակի ներքևի թևը լայն գեղարդաձև հիմքով, ինչպիսին հանդիպում է Թալինի, Մրենի և Դարբանդի կողմերում»<sup>97</sup>: Քրիստոնեական պատկերազրույթյունում եռանկյունաձև սլաքը՝ եռանկյունին, կարող է խորհրդանշել Սուրբ Երրորդությունը:

Նկ. 10. Կոթողի 4-րդ նիստը

Рис. 10. Четвертая грань стелы.

Pic. 10. Forth side of the stela.

Ըստ Լ. Ազարյանի՝ «Սլաքի և եռանկյունաձև սեպի պատկերը Ասորեստանում ընդունվել է որպես աստվածային հասկացության խորհրդանիշ: Այն կապում են նաև հայկական Տիր աստվածության հետ: Տիր բառը հին պարսկերենում նշանակել է նաև նետ և Մերկուրի (Տիր) մոլորակը: Առավել

<sup>97</sup> Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 51:

կարևոր է խորենացու այն վկայութիւնը, թե Արշակ Ա.-ն (II դ. վերջ մ. թ. ա.) ի նշանավորումն պոնտացիների դեմ տարած հաղթանակի, վրան տեղ ամրացրած կոթող է կանգնեցնում<sup>98</sup>: Հնարավոր է, որ դեկորատիվ նշանակութիւն ստացած զարդապատկերային այս մոտիվը կոթողների վրա խաչի հետ մեկտեղ խորհրդանշում է նաև քրիստոնեութիւն հաղթանակը<sup>99</sup>:

Ըստ Գր. Գրիգորյանի՝ Գառնահովտի կոթողի այդ «նիստին պատկերված նիզակատեգի քանդակը Միհր աստծո ատրիբուտն է, և կոնկրետ այդ հորինվածքում Միհրը ներկայանում է իբրև գերեզմանների վերակացու ու պահապան, ննջեցյալների ճակատագրի տեր»<sup>100</sup>: Ինչ վերաբերում է վերասլաց աղոսին, ապա Գր. Գրիգորյանն այն կարծում է սեպ և, ի տարբերութիւն Լ. Ազարյանի, դա է համարում Տիր աստծո խորհրդանշը, այլ ոչ թե տեգը, որը նա կապում է Միհրի հետ<sup>101</sup>: Ամեն դեպքում, Միհրն ու Տիրն աղբրսվում են «հոգու փրկութիւն գաղափարի հետ»<sup>102</sup> և անկախ ժամանակից՝ ընդգծում կոթողի մահարձան լինելը:

Այսպիսով, Գառնահովտի կոթողը մեր կողմից համարվելով Սպանդարատ Կամսարականի և Արշանուշ Արշակունու հիշատակին կանգնեցված հուշարձան՝ հստակեցնում է նաև դրա կերտման ժամանակը՝ IV դ. երկրորդ կես:

Բնականաբար, նման բարձարվեստ ու բազմաբովանդակ կոթող կերտած բնակավայրում ժամանակի ընթացքում պիտի հզորանար ստեղծագործական ոգին՝ այն նոր մակարդակի բարձրացվելով, որն էլ իրավամբ արտացոլվեց Ս. Գևորգ եկեղեցու արարմամբ:

Ինքնըստինքյան շատերի մոտ հարց է ծագում՝ ինչու՞մ բացատրել Գառնահովտ փոքր դյուղում այդպիսի մեծ, նրբարվեստ եկեղեցու գոյութիւնը, երբ Հայաստանի բազմաթիվ

<sup>98</sup> Տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 135:

<sup>99</sup> Լ. Ազարյան, նշվ. աշխ., էջ 66:

<sup>100</sup> Գր. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 82:

<sup>101</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 81:

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 83:

մեծ բնակավայրեր կերպգեին նման սրբատուն ունենալը: Արդ, առաջ է գալիս նաև երկրորդ խնդիրը. ո՞վ է պատվիրատուն, և ե՞րբ է կառուցվել եկեղեցին:

Արդեն տեսանք, որ Շիրակի կազմում ընդգրկված Գառնահովիտը պատկանել է Կամսարական նախարարական տանը, որը Հայոց իշխանակարգում զբաղեցրել է 12-րդ տեղը և բանակին տվել 600 հեծյալ, նվիրաբար ծառայել հայրենիքին, 451 թ. հերոսացել Ավարայրում՝ ի դեմս զորավար Արշավիր Բ. Կամսարականի և Վահանանց պատերազմում (482-484), որտեղ փայլատակել է Ներսեհ Բ. Կամսարականի ռազմական տաղանդը, նաև 572 թ. հակապարսկական ապստամբության ժամանակ, երբ սպարապետ Կարմիր Վարդան Մամիկոնյանի զինակից, քաջ իշխան Զորակ Կամսարականն սպանել է Հայաստանի պարսիկ հայատյաց մարզպան Սուրենին: Կամսարականները ոչ միայն պատերազմել են, այլև՝ կառուցել, հիմնել են ամրոցներ (Անի, Կապույտ, Արտազերս, Քաղենի), հատկապես աչքի են ընկել եկեղեցաշինությամբ՝ Տեկոր, Նախճավան, Ալաման, Մրեն, Թալին, նաև՝ Գառնահովիտ:

Նրանք հովանավորել են գիտության, մասնավորապես ճշգրիտ ուղղությունների՝ բնափիլիսոփայության, մաթեմատիկայի, տիեզերագիտության, տոմարագիտության, աշխարհագրության, քարտեզագրության զարգացումը, որոնցում անգնահատելի է Անանիա Շիրակացու (610-685) դերը, նպաստել մշակույթի վերելքին, խրախուսել թարգմանչական գործը<sup>103</sup>:

Հնում, ինչպես նաև մեր օրերում, յուրաքանչյուր գործիչ ջանում էր կառուցել եկեղեցի՝ երկրում և հասարակության

<sup>103</sup> Կամսարականները մեծապես աջակցել են նաև կրթությանը, հատկապես բարձր կարգի դպրոցներ, հիմնադրել և ըստ ամենայնի խնամակալել են Արշարունյաց նշանավոր վարդապետարանները, սատարել հայ աստվածաբանական, փիլիսոփայական մտքի խորացմանը, որում փայլել են քաջ փիլիսոփայ եւ նախընտիր ի վարդապետս Հայոց Գրիգորիս Արշարունին (683-726) և թարգմանիչ Փիլոն վարդապետ Տիրակացին (Շիրակացին)՝ VII-VIII դդ. (տես Մ. արքեպս. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա., Ս. էջմիածին, 2001, ս. 929, 977):



մեջ իր ունեցած դիրքին ու կշռին համապատասխան: Ժամանակին Թ. Թորամանյանը նկատել է ընդհանրություններ Գառնահովտի ու Թալինի երկու եկեղեցիների միջև: Վերջիններս, ինչպես հայտնի է, կառուցել է 689-693 թթ. Հայոց իշխան (Հայաստանի իշխանապետ) Ներսեհ Կամսարականը: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին այս Ներսեհ Դ.-ին նույնացնում է Ալամանի 637 թ.<sup>104</sup> և Մրենի 639 թ.<sup>105</sup> արձանագրություններում հիշատակվող, «Շիրակայ եւ Արշարունեաց տեառն» Ներսեհ Գ. Կամսարական իշխանի հետ<sup>106</sup>:

Մինչդեռ Հրաչյա Աճառյանը տարանջատում է երկու Ներսեհներին<sup>107</sup>, ըստ այդմ՝ Ալամանի և Թալինի համանուն իշխանները տարբեր անձինք են և գործել են զանազան ժամանակներում, ինչի օգտին խոսում է նրանց միջև 50 տարվա տարբերությունը, և ինչպես նկատվել է, Հուստինիանոս Բ. կայսրը (685-695 և 705-711) զառամյալ ծերունու չէր նշանակի Հայոց իշխան: Ներսեհ Դ.-ն որդին է Վահան Ճգնավոր Կամսարական իշխանի:

Թալինի Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրությունում հիշատակվում է Ներսեհ Դ.-ի կին Շուշանը<sup>108</sup>: Տիկնոջ կապակցությամբ Ս. Կողյանը գրում է. «Շուշան անունը կը թելադրէ ինձ մակարեբել, որ Ներսեհ Կամսարական, շինող Թալինի, Մամիկոնեան կին առած ըլլայ... Խնամիական այս երկարատև աղերսը հասկանալի կընէ, որ երկու տոհմերը հոգատար ըլլային փոխադարձաբար իրարու պահպանման ու յառաջացման»<sup>109</sup>: Հանձին բարեպաշտ Շուշանի՝ Ա. Տեր-Ղևոնդյանը ենթադրում է այն Կամսարական իշխանուհուն, ով Վարդանակերտի 703 թ. հաղթական ճակատամարտից հետո, ըստ Ղևոնդ պատմիչի, բարեգլխաբար փրկեց Հայոց իշխան Սմբատ Բյուրատյան Բագրատունուց (693-701 և 703-

<sup>104</sup> Տե՛ս Ի. Օրբելի, *Избранные труды*, Ереван, 1963, էջ 435:

<sup>105</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 401:

<sup>106</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 435:

<sup>107</sup> Տե՛ս Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Դ., էջ 32-33:

<sup>108</sup> Տե՛ս Ի. Օրբելի, նշվ. աշխ., էջ 434:

<sup>109</sup> Ս. Կողյան, նշվ. աշխ., էջ 66-67:

726) հետապնդվող հոգնած, հյուծված, վիրավոր 300 արաբ զորականների կյանքը<sup>110</sup>:

Եվ այսպես, ենթադրելի է, որ Ներսեհ Դ. Կամսարականը, երբ դարձել է իրենց տոհմի տանուտեր՝ գլխավոր, Շիրակի և Արշարունիքի տեր, իր ավատական տիրույթ, նստավայր Գառնահովտում VII դ. կեսին կառուցել է Ս. Գևորգ եկեղեցին: Առհասարակ, Շիրակի Կամսարական իշխանների համար Գառնահովտին նախապատվություն տալը պատահական չէր. վաղ ժամանակներում այն ավելի մոտ էր մայրաքաղաք Դվինին, իսկ VII դ. երկրորդ կեսին, մասնավորապես 661-685 թթ., երկրի վարչական կենտրոն, Հայոց իշխանանիստ Արուճ ավանին: Ներսեհ Կամսարականը, 689 թ. Հայոց իշխանապետ դառնալով, վերջնականապես տեղափոխվել է միջազգային բանուկ ճանապարհի վրա գտնվող Թալին: Անանիա Շիրակացին իր թվաբանական «Խնդրագրքի» 20-րդ խնդրում հիշատակում է Շիրակի և Արշարունյաց տեր Ներսեհ Կամսարականին, որի որսատեղին էր Արտին լեռան ստորոտը, և ով որսից առաջ իր եղբայրների ու ազատների հետ գտնվում էր Թալին գյուղում<sup>111</sup>: Վերջինս 689-693 թթ. հռչակվեց որպես Հայաստանի կենտրոն, որտեղ Ներսեհ Դ. Կամսարականը կառուցեց իր գերբարձր դիրքին ու Հայոց իշխանանիստին վայել Ս. Կաթողիկե եկեղեցին, նաև փոքր՝ Ս. Աստվածածինը:

Պատահական չէ ձիու պատկերաքանդակը Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցու պատին (տե՛ս նկ. 11.). այդ կենդանին, կարծում ենք, եղել է Կամսարական իշխական տոհմի խորհրդ-

<sup>110</sup> Տե՛ս Դևոնդ, Պատմություն (Աշխարհարար Թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Տեր-Դևոնդյանի), Եր., 1982, էջ 33, 145: Հայ մատենագրություն մեջ VIII դ. սկզբին հիշատակվում է պատրիկ Վահան Կամսարականի դուստր Շուշան Վկայուհի (Ներսեհ Դ.-ի քույրը-Ա. Մ.), ով Նախիջևանի 705 թ. նախճիրից հետո Հայ նախարարների ընտանիքների հետ նույնպես գերություն է տարվել Միջագետք, որտեղ նահատակվել է վասն քրիստոնեության (տե՛ս Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Բ, Եր., 1984, էջ 382):

<sup>111</sup> Տե՛ս «Յաղագս հարցման եւ լուծման երիցս երանեալ Անանիա վարդապետի Շիրակացւոյ», տպագրեաց Յ. Աւրբելի, Պետրոգրադ, 1918, էջ 25-26, Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Եր., 1979, էջ 58:





Նկ. 11. Զիու պատկերաքանդակը Հյուսիսարևմտյան խորշի վերևում  
 Рис. 11. Рельефное изображение коня выше северо-западной ниши  
 Pic. 11. Relief depiction of a horse above the northwestern niche

դանիշերից<sup>112</sup>:

Կամսարականների պարթևական ցեղանվան՝ պահլավ ձևում, ըստ միջնադարի ականավոր գիտնական, ռազմաքաղաքական նշանավոր գործիչ Գրիգոր Մազիստրոս Պահլավունու (985/90-1058) ստուգաբանության, պ(ի)ահլ=ձի բառն է<sup>113</sup>: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ ձին

<sup>112</sup> Ըստ Վիքիպեդիայի՝ Կամսարականների խորհրդանիշը եղել է ցուլը, քանի որ «կամսար» պարսկերեն նշանակում է «ցուլի գլուխ ունեցող» (տե՛ս [https:// hy. Wikipedia. org/wiki/Կամսարականներ](https://hy.wikipedia.org/wiki/Կամսարականներ)): Մովսես Խորենացին «կամսար» բառն ստուգաբանում է՝ «պակասավոր գլուխ», Ֆերդինանտ Յուստին՝ kamasara=«ըստ կամի իշխող», այստեղից էլ camisares=«կուսակալ», ինչը հարիր էր Արշավիր Ա.-ի օրոք Կամսարականների բարձր դիրքին (տե՛ս Աշ. Մանուչարյան, Վիժազրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), եր., 2015, էջ 43):

<sup>113</sup> Տե՛ս Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մազիստրոս, Լոս-Անճելես, 1987, էջ 413, նաև՝ Աշ. Մանուչարյան, նույն տեղում, էջ 42: Այսինքն՝ «պահլավ» նշանակում է «ձիավոր», «ազատ», «ազնվական» (հնում ազատները հեծյալներն էին):

պատկերված է եկեղեցու հյուսիսային պատի արևմտյան մասում՝ արևելքից-արևմուտք ընթանալիս: Դա էլ պատահականությունն է. Կամսարականները III դ. կեսերին Հայաստան եկել են Պարսկաստանից՝ արևելքից: Իսկ Հայաստանը գտնվում է Պարսկաստանից հյուսիս-արևմուտք:

Ինչպես առաջին ենթադրյալում նշել ենք, Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցու ճարտարապետը Վարդեսն է: Այդ անունն այլուստ չի հանդիպում և անծանոթ է Հր. Աճառյանին: Փոխարենը հանդիպում է Վարդաս անուն: Այդ անունն է կրել Բյուզանդիայի Թեոդորա կայսրուհու (842-856) եղբայրը՝ բյուզանդական բանակի նշանավոր զորավար Վարդաս Մամիկոնյանը: Արդ, Վարդես ճարտարապետը Մամիկոնյան տոհմի ներկայացուցիչ է, գուցե Շուշան իշխանուհու ազգականը, որին է վստահվել կառուցելու Կամսարական տոհմապետ Ներսեհ Դ.-ի տանուտիրական նստավայր Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցին: Ճարտարապետի ընտրությունը պատահական չէր. Հայոց մեջ VII դ. կեսի եկեղեցաշինությունն զափնին իրավամբ պատկանում էր Մամիկոնյան տոհմին. Ներսես Գ. Տայեցի կաթողիկոս (641-661)՝ Խոր Վիրապ, Զվարթնոց, Իշխան, Բանակ, Վարազավանք, Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյան (661-685)՝ Արուճ, Եղվարդ:

Մամիկոնյանների ճարտարապետներն իրենց զգացնել են տալիս Թալինում ևս: Մասնագետները նկատել են, որ տեղի Ս. Կաթողիկեի ճարտարապետական ձևերում և հարդարանքի տարրերում տեսանելի է Զվարթնոցի տաճարի ազդեցությունը<sup>114</sup>:

Թալինի Ս. Կաթողիկեի հյուսիսային մասում գտնվող դամբարանը մենք ենթադրում ենք Հայոց իշխան՝ ապուհյուպատ պատրիկ Ներսեհ Դ. Կամսարականի և նրա կին Շուշան Մամիկոնյանի տապանատուն<sup>115</sup>, չնայած 2001 թ. հնագետ-վիճագրագետներ Գազիկ Սարգսյանի, Հուսիկ Մելքոնյանի,

<sup>114</sup> Տե՛ս Ալ. Մանուչարյան, Թալինի կաթողիկե եկեղեցին, «Էջմիածին», 1988, Ը, էջ 41:

<sup>115</sup> Տե՛ս Ալ. Մանուչարյան, Արագածոտնի նախարարական տները IV-VII դարերում, «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», 2017, № 3, էջ 44:

ճարտարապետ Գրիգոր Նալբանդյանի՝ տեղում իրականացրած պեղումների արդյունքում հայտնաբերված ստորգետնյա այդ կառույցը<sup>116</sup> մասնագետները թվագրում են V դարով<sup>117</sup>:

Հայաստանում արաբական տիրապետության վերջնական հաստատմամբ՝ VIII դ. սկիզբ, Կամսարականների փայլն աստիճանաբար սկսեց խամրել: Իսկ 774-775 թթ. հակաարաբական ապստամբությունից հետո մի շարք նվաղած նախարարական տներ, որոնց թվում նաև Կամսարականները, իրենց հողերը վաճառեցին Աշոտ Մսակեր Բագրատունուն (պաշտոնապես Հայոց իշխան՝ 804-826) և հեռացան Արևելյան Հայաստանից:

Ենթադրելի է, որ առուվաճառքի այդ գործարքը կատարվել է 785 թ.-ից հետո, երբ Քերանի դաշտում՝ Դարբանդի մոտ, խորշակահար վախճանվել է տոհմի տանուտեր Ներսիս Ե.-ն:

Այսպիսով, 325-785 թթ.՝ 460 տարի, ԳառաՀովիտը պատկանել է Կամսարականներին, ապա անցել Բագրատունիներին:

Ա. Պատրիկը վերարտադրել է Կամսարական իշխանի պատկերն ըստ Ն. Մառի<sup>118</sup>.

<sup>116</sup> Տե՛ս Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Գ. Նալբանդյան, Թալինի միանավ եկեղեցու նորահայտ ստորգետնյա դամբարանը, «Քրիստոնյա Հայաստանի արվեստը»: Միջազգային գիտաժողովի նյութեր: Զեկուցումների թեզիսներ, Եր., 2001, էջ 50-52:

<sup>117</sup> Տե՛ս ՀԺԳ, էջ 207:

<sup>118</sup> Ա. Պատրիկ, նշվ. աշխ., էջ 38, տախտակ 12: "Описание дворцовой церкви въ Ани". Составилъ Н. Марръ. Петроградъ, 1916, էջ 32:



Նկ. 12. Կամսարական իշխան  
Рис. 12. Князь Камсаракан  
Pic. 12. Kamsarakan prince

Բագրատունյաց Հարստության շրջանում (874/885-1045) Հայոց արքաները Մաստարա-Քաղենի տարածաշրջանը, այդ թվում նաև Գառնահովիտը, շնորհում են երկրում երկրորդ դիրքն ունեցող Պահլավունի իշխաններին, որոնք իրենց հորջորջում էին Կամսարականներից սերող: Պահլավունիներն իրենց տիրույթներում կատարում էին Հարկերից ազատում, ինչը բարերար էր ժողովրդի համար և շահեկան եկեղեցուն:

Գառնահովիտ գյուղից 1 կմ արևելք, ձորի մեջ X դ. կառուցվել է Ս. Հովհաննես եկեղեցին, որը հյուսիսից կից ունի մատուռ: Եկեղեցու մուտքի երկու կողմերում տեղադրված են IV դ. կոթողներ: Տեղանքը հենց քրիստոնեության սկզբնավորումից ի վեր հարմարավետ վայր էր՝ հոգու փրկության համար ճգնակեցությունը ապավինելու Աստծու ողորմածությանը: Գեղատեսիլ ձորակի միջով հոսող գետակի աջ ափին ուշադրություն է գրավում վերևի լեռից պոկված ու այդտեղ ընկած հսկա մի ժայռաբեկոր: Այն փորելով՝ ճգնա-

վորները ժամանակին դարձրել են երդիկավոր ճգնարան-խուց: Դրա շուրջ պատմականորեն ձևավորվել է մի հետաքրքրական ավանդազրույց՝ երբ հիվանդ մարդը մտնում է խուցը և դուրս գալիս երդիկով, այնտեղ է թողնում իր հիվանդությունը:

Քանի որ Մաստարայի մի արձանագրությունից ակնբախ է, որ այդ տարածքները պատկանել են Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունուն (998-1045), ուստի ենթադրելի է, որ բարեպաշտ քաջ զորականը Գառնահովտի ձորում հիմնել է վանք՝ հավաքել ճգնավորներին ու նրանց միաբանեցրել Ս. Հովհաննես Մկրտչի ուխտի եղբայրության ներքո՝ հոգալով կրոնավորների կենցաղավարական խնդիրները:

Հայաստանի ազգային արխիվում պահվող հուշարձանի անձնագիր № 77-ում, որը կազմվել է հնագիտական արշավախմբի նյութերի հիման վրա 1952 թ. մարտի 28-ին, գրառված է, որ Գառնահովտից մոտ 2 կմ դեպի արևմուտք, ձորափի քարափում կա ժայռափոր մի մատուռ, որին տեղացիները կոչում են “Ճգնավոր”<sup>119</sup>: Իսկ այս մատուռից 0,5 կմ արևելք, ըստ 1947 թ. հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության արշավախմբի տվյալների, կան քարայր-բնակարաններ<sup>120</sup>, որոնք որպես կացարաններ միջնադարում կարող էին օգտագործված լինել ճգնավորների կողմից:

Շիրակ-Արագածոտնում սելջուկյան տիրապետության շրջանում (1064-1191/96) Գառնահովտը մաս է կազմել Անիի Շաղաղայան ամիրայության, և քանի որ Պահլավունիներից ընձյուղված Ապիրատյան տոհմն ամենաառաջնագասն էր երկրում, հետևապես, որքան էլ մշակութային կյանքն անկում էր ապրել, այնուհանդերձ, հոգևոր առումով չի մարել, և Ս. Գևորգ եկեղեցին շարունակել է գործել:

Հայաստանը սելջուկ-թուրքական բռնապետությունից Զաքարի և Իվանե եղբայրների զլխավորությամբ ազատագրվելուց հետո հարավային մերձգառնահովտյան տարածք-

<sup>119</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1560, թ. 58-շրջ.:

<sup>120</sup> Տե՛ս նույն տեղում:



ները պատկանել են Զաքարյաններին, որոնք էլ հոգ տարան եկեղեցու պայծառության համար: Երկրում բարձրացավ եկեղեցաշինության հերթական, թերևս ամենահուժկու ալիքը. Հայաստանում ամենուրեք վերականգնվում էին հին խոնարհված եկեղեցիները, կառուցվում էին նորերը: Զաքարյան իշխանապետության օրոք պիտի որ վերստին վերապայծառանար Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցին, նաև ձորամիջյան Ս. Հովհաննեսը: Ասվածի վկայությունները տեղեկում XIII դ. խաչքարերի առկայություններն են:

Պատմության թատերաբեմից XV դ. կեսերին հայկական հրեմանի հզոր իշխանական տների անհետացումը խիստ բացասաբար անդրադարձավ նաև եկեղեցու վրա: Եկեղեցին, ըստ էության, գրկվեց իր հովանավորներից: Կյանքն անկում ապրեց: Մաստարայի օրինակով պետք է ենթադրել, որ Գառնահովտը նույնպես պատկանել է Արեւելքի անապատներից մեր երկիր ու տարածաշրջան ներխուժած քոչվոր ոչխարապահ ցեղերի նոր ալիքի ներկայացուցիչների: Եվ իրոք, այդպես էլ եղած պիտի լինի, քանի որ Գառնահովտն իր բնակչիմայական պայմաններով, հարուստ արոտավայրերով պետք է խիստ ախորժելի թվար եկվոր խաշնարած անապատաբնականների համար: Օտարի բռնակալ տիրապետությանը ստեղծված անտանելի պայմանները պատճառ են դառնում բնակավայրերի մարդաթափման, գյուղերի դատարկման: XIX դ. տեղագիր Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցն Արագածոտնի տարածաշրջանի Թալինի գավառի գյուղերի մեջ հիշատակում է նաև Ատիեամանը, որը սակավամարդ էր դարձել և որտեղ կար «եկեղեցին քարաշէն ի հնոց»<sup>121</sup>: Խոսքի վերջը Ս. Գևորգի մասին է: Անշուշտ, դա եղել է նախքան 1831 թվականի ներգաղթը:

Գյուղի հին գերեզմանոցում, որտեղ կան IV դ. կոթողներ, VII դ. տապանաքար, X դ. խաչքարի բեկոր, XV-XVII դդ. բազմաթիվ շիրմաքարեր, XIX-XX դդ. մահարձաններ, մեր ուշագրությունը գրավեց օրորցած և մի գերեզմանաքարի հա-

<sup>121</sup> Տե՛ս Յովհ. եպս. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Ս. էջմիածին, 2014, էջ 244:

րավային նիստին փորագրված արձանագրությունը: Նրանում հիշատակվում է հանգուցյալ Տեր Ստեփանոս Տեր-Գրիգորյանց քահանա, որը ծնվել է 1828 թ., քահանայացել (ձեռնադրվել քահանա) 1863-ին (այսինքն՝ 35 տարեկանում), վախճանվել 1913 թվականին<sup>122</sup>: Սա շատ կարևոր տեղեկություն է. Տեր Ստեփանոսից առաջ քահանա էր նրա հայրը՝ Տեր Գրիգորը: Հարկավ, Սբ. Էջմիածնի Սինոդի 1863 թ. դեկտեմբերի 25-ի օրագրությունից իմանում ենք, որ Տեր Գրիգորը՝ Հակոբի որդի Գրիգոր քահանա Քոչարյանցը, 1859 թ. 54 տարեկան հասակում կարգվել է հոգևորական՝ արժանանալով դպիրի և ավագ սարկավագության աստիճանների, իսկ 1862 թ. ձեռնադրվել է քահանա, բայց նույն տարին էլ մահացել է<sup>123</sup>:

Թ. Թորամանյանն ասում է, որ Գառնահովտի «այժմյան բնակչությունը նոր է և գյուղը հիմնարկվածն է Պասկևիչի պատերազմեն հետո, բնակիչներեն մեծ մասը եկեր է Սարգարապատեն:

Այս գյուղի հիմնարկության պատմությունը մասնավորապես գրի առեր է գյուղի բնակիչներեն պ. Սիրական Դավթյանը, որուն ... պապը եղեր է այս գյուղի հիմնողը. իր գրած գյուղի պատմության մեջ նա հիշատակած է համառոտակի ժամանակակից քաղաքական անցքեր, որոնք թերևս ուրիշ պատմագիրներու հայտնի չեն եղած. այս տեսակետով կարևոր է ուսումնասիրել հիշյալ պ. Սիրականի հիշատակարանը»<sup>124</sup>:

Եթե խոսքն արևելահայաստանյան Սարգարապատ բնակավայրի մասին է, ապա կարծում ենք, որ բնակիչների մի մասն այդտեղից Գառնահովտ տեղափոխվել է այն բանից հետո, երբ ռուսական զորքը 1827 թ. սեպտեմբերի 20-ին վեցօրյա թեժ մարտերից հետո պարսիկներից գրավել է 1820-ական թվա-

<sup>122</sup> Մեր դաշտային օրագրից:

<sup>123</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 6, վավ. 322, թ. 647-648: Նյութը մեզ տրամադրել է Արմեն Ասատրյանը, ում հայտնում ենք մեր երախտագիտությունը:

<sup>124</sup> Թ. Թորամանյան, նշվ. աշխ., ժող. 2-րդ, էջ 163:

կաններին Հոսեին Ղուլի խանի կառուցած կրկնապարիսպ ու աշտարակավոր բերդը (ավերակները գտնվում են այժմյան Նոր Արմավիր գյուղի մոտ), որը Երևանը պաշտպանում էր արևմուտքից: Ըստ բազմահատոր «Տեղանունների բառարան»-ի հեղինակների՝ Երևանի Հոսեին խանը բերդը դարձրել էր խոշոր բնակավայր, որտեղ բնակեցրել էր Արճեշից ու Բայազետից բերված հայ գաղթականների<sup>125</sup>:

Ձի բացառված, որ վերաբնակների մի հատված էլ եկած լինի իրանական Սարդարաբադից, որը գտնվել է Ուրմիա քաղաքից 20-22 կմ հյուսիս-արևմուտք<sup>126</sup>, քանի որ Գառնահովտում տեղեկացանք, որ գյուղի մի մասի նախնիները ներգաղթել են Պարսկահայաստանից: Գյուղում որոշ տոկոս են կազմում նաև Արևմտյան Հայաստանից գաղթածների սերունդները:

Այդ ներգաղթների շնորհիվ գյուղն արդեն XIX դարավերջին ունեցել է 669 բնակիչ<sup>127</sup>:

Հարկ ենք համարում նշել, որ մեր մեջ առաջացած մեծ ցանկոլթյունը և գործադրած ջանքերը՝ որոնելու և գտնելու Սիրական Դավթյանի «Պատմություն»-ը, որը մեզ մեծապես կօգնեի սույն աշխատանքի շարադրանքում, հաջողություն չունեցան<sup>128</sup>:

<sup>125</sup> Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Եր., 1998, էջ 523:

<sup>126</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>127</sup> Տե՛ս Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Եր., 1986, էջ 795: Այսուհետև՝ Տեղանունների բառարան, հ. 1 և էջը:

<sup>128</sup> Սիրական Դավթյանի թողը՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 1987-2006 թթ. Երևանի Մխիթար Հեռացու անվ. բժշկական համալսարանի ռեկտոր, պարոն Վիլեն Հակոբյանը, մեզ հետ հանդիպման ժամանակ պատմեց, որ ինքը շատ տարիներ առաջ փնտրել է իր պապի հիշատակարանը: Այդ ընթացքում Վ. Հակոբյանն իմացել է, որ Դավթյանի «Պատմություն»-ը հեղինակից վերցրել ու իր հետ տարել է Թ. Թորամանյանը՝ հավանաբար հրատարակելու նպատակով: Վ. Հակոբյանը հանդիպել է ճարտարապետի թոռնուհուն: Վերջինս ցավով հայտնել է, որ Թ. Թորամանյանի տան հրդեհվելու ժամանակ այրվել են անվանի ճարտարապետի շատ արժեքավոր ձեռագրեր: Մնում է ավստոսանքով ենթադրել, որ գառնահովիտցի մտավորական, Սարդարապատի հերոսամարտի մասնակից Սիրական Դավթյանի հիշատակարանը եղել է այրված ձեռագրերի մեջ:

Նորաբնակներով վերազարթնած գյուղը բավականին մեծ պատկառանքով է վերաբերվել Կամսարականների երբեմնի շիրակյան նստավայրին և նրա անզուգական հնություններին. 1862 թ. գառնահովիտցի Սրապիոն խալաթյանցը վերանորոգել է ձորամիջի Ս. Հովհաննես եկեղեցին՝ այդ մասին հարավային պատի եզրին թողնելով 11 տողանի արձանագրություն<sup>129</sup>: Վիճադրում Սրապիոնը հանգավորված խնդրում է Սուրբ Հովհաննես Մկրտչին, որպեսզի նա խղճալի հայ ազգին մթից դեպի լույս հանի, նաև իրեն դիմող թշվառների իղձը կատարի<sup>130</sup>:

Գառնահովիտցիների շրջանում իր բարեպաշտությամբ, ժրջան աշխատասիրությամբ, հոգևոր գիտելիքներով աչքի է ընկել խաչատուր Մանուկյանը, որը Սինոդին ուղղված համագյուղացիների խնդրանքով 1866 թ. ձեռնադրվել է դպիր<sup>131</sup>: Նա 1870 թ. ստանում է քահանայական ձեռնադրություն՝ նշանակվելով հոգևոր հովվության Մազարջուղ (Շենիկ) և Ահագչի (Զովասար) գյուղերում<sup>132</sup>: Իսկ Ադիամանում շարունակում էր քահանայադործել Տեր Ստեփանոս Տեր Գրիգորյան Քոչարյանցը: Արդեն 1901 թ. Ադիամանի Ս. Գևորգ եկեղեցին ուներ երկու քահանա՝ Տեր Ստեփանոս Տեր-Գրիգորյան և Տեր Խաչատուր Մանուկյան<sup>133</sup>:

XX դարասկզբին Ադիամանում երկու ծխակատարի հոգևոր պահանջարկը կար, քանի որ գյուղի բնակչությունն աճել էր՝ 1904 թ. հասնելով 781 ծխականի<sup>134</sup>: Այդ թվականին Ս. Գևորգը

<sup>129</sup> Մեր դաշտային օրագրից:

<sup>130</sup> Մեր դաշտային օրագրից:

<sup>131</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 67, վավ. 118, թ. 218 և շրջ.: Նյութը նույնպես տրամադրել է Ա. Ասատրյանը:

<sup>132</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, թղթ. 81, վավ. 197: Նյութի տրամադրումը՝ Ա. Ասատրյանի:

<sup>133</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ. 246. թ. 124 շրջ.: Նյութի տրամադրումը՝ Ա. Ասատրյանի:

<sup>134</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 10276, թ. 49, 75. 102: Նյութի տրամադրումը՝ Ա. Ասատրյանի:

բացի երկու քահանայից, ունեւ նաև չորս եկեղեցական սպասավոր<sup>135</sup>:

Առաջին հանրապետութեան տարիներին (1918-1920), որքան էլ ծանր, օրհասական էր երկրի վիճակը (Ցեղասպանութեան հետևանքներ, գաղթականութիւն, պատերազմ, սով) եկեղեցին գտնվել է պետութեան հոգածութեան ներքո, Մայր Աթոռ-պետութիւնը հարաբերութիւններում մեկը սատարել է մյուսին: Գառնահովտի Ս. Գևորգ եկեղեցին այդ օրերին հաջողութեամբ գործել է. 1919 թ. փետրվարի 15-ին Երևանի փոխթեմակալ Խորեն եպս. Մուրադբեկյանը (հետագայում Հայոց հայրապետ՝ 1932-1938) նախահաշիվ է ներկայացնում Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին (1911-1930)՝ կառավարութիւնից ծխական դպրոցներին ու ուսուցիչներին ընթացիկ տարվա համար տրվելիք նպաստների չափերի մասին: 1919 թ. ծխական դպրոցների նախահաշիվում 61 կրթարանների շարքում 14-րդը հիշատակվում է Ադիաման գյուղը, որտեղ, ըստ ցուցակի, եղել է մեկ ուսուցիչ, որին վճարվելիք տարեկան գումարի չափը կազմել է 9360 ռուբլի, որից 7860-ը տրվել է նրան որպես ուճիկ, իսկ 1500-ը՝ իբրև այլ ծախսեր<sup>136</sup>:

Ծանր է եղել եկեղեցու վիճակը Խորհրդային տարիներին (1920-1991), հատկապես՝ ստալինյան բռնապետութեան շրջանում (1924-1953): Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Խորեն արքեպս. Մուրադբեկյանի՝ 1931 թ. սեպտեմբերի հաշվետվութեան մեջ (այն վերաբերում էր հայկական եկեղեցիների ու քահանաների վիճակին) ասվում է. «Լենինականի շրջանի բանտարկւած քահանաների թիւը ևս մեծ է: Բոլոր բանտարկեալ քահանաներին տանում են պարտադիր ծանր աշխատանքի»<sup>137</sup>: Նույն հաշվետվութեան մեջ նշվում է, որ Հյուս-

<sup>135</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>136</sup> Տե՛ս «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Ե: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը առաջին հանրապետութեան տարիներին (1918-1920 թթ.)» / Կազմող՝ Սանդրո Բեհբուդյան, Եր., 1999, էջ 109-110:

<sup>137</sup> «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Գիրք Բ. Խորեն Ա Մուրադբեկյան. Կաթողիկոս Ամենայն Հայոց (Հոգևոր գործունեութիւնը 1901-1938 թթ.)» / Կազմող՝ Ս. Ա. Բեհբուդյան, Եր., 1996, էջ 311-312:



սիսային Հայաստանի, Վայոց ձորի, Սյունիքի, Լեռնային Ղարաբաղի բոլոր եկեղեցիները փակ են: Փակ են նաև կենտրոնական Հայաստանի մի շարք վայրերի եկեղեցիներ: Քահանաների մի մասն աքսորված է, որոշները՝ բանտարկված, ոմանք էլ սպառնալիքների ներքո հրաժարվել են քահանայագործությունից: Համարյա նույն իրավիճակն է տիրում ամենուրեք<sup>138</sup>:

Աստվածամերժողություն սոսկալի ալիքը չի շրջանցել նաև հեռավոր լեռնային Գառնահովիտ գյուղը. Ս. Գևորգ եկեղեցին փակվել է 1932 թ. և օգտագործվել որպես կոլտնտեսություն հացահատիկի պահեստ<sup>139</sup>, իսկ քահանան՝ Տեր Արամ Մանուկյանը, իր որդի խորենի հետ 1937 թ. աքսորվել է Սիբիր, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն:

Հայաստանի ազգային արխիվում պահվում է Ս. Գևորգ եկեղեցու մի լուսանկար՝ հարավ-արևելքից, արված հավանաբար 1940-ականներին: Այդ նկարում կառույցի բոլոր պատուհանները՝ գմբեթի թմբուկինը ներառյալ, փակված են տուֆի տաշած քարերի շարվածքով<sup>140</sup>: Դա հավանաբար արվել է՝ ներսը ցրտաշունչ ձմռանը տաք պահելու համար:

Ադիամանը 1946 թ. ՀՍՍՀ Գերագույն խորհրդի 12/11 հրամանագրով կոչվել է Գառնահովիտ<sup>141</sup>: Ընթացքում սահուն արտասանության համար ավելացել է «ա» հոգակապը, և գյուղանունը դարձել է Գառնահովիտ:

ԽՍՀՄ համայնավարական, աստվածամերժողական համակարգի փլուզումից հետո, որքան էլ դժվար էր նորանկախ Հայաստանի ու նրա քաղաքացիների համար (պատերազմ, խավար, ցուրտ, քաղց, արտագաղթ), այնուհանդերձ, ազգային-եկեղեցական արժեքներին, ավանդույթներին հավատարիմ գառնահովիտցիներն իրենց մեջ ուժ են գտել և անգլիական մի ծրագրի օժանդակությամբ 1991-1998 թթ. հիմնանորոգել Ս. Գևորգ եկեղեցին:

<sup>138</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>139</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 7, գ. 40, թ. 29:

<sup>140</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1560:

<sup>141</sup> Տեղանունների բառարան, հ. 1, էջ 795:

2017 թ. գառնահովիտցի երևանաբնակ գործարար, բարերար Համլետ Թադևոսյանը հիմնովին բարեկարգել է եկեղեցու՝ քարակույտերից և ավերակակույտերից անշքացած տարածքը, պարսպապատել այն, տեղադրել տաճարի լուսամուտները: Ազգագրական տեսանկյունից առանձնակի ուշադրություն են գրավում գյուղի հին տներից հանված ու հյուսիսային պարսպի մեջ տեղադրված տուֆակերտ չորս վառարանները, որոնց վրա վարպետները փորձել են որոշ չափով կրկնել Գառնահովտի հայտնի կոթողի և եկեղեցու վարդյակներն ու այլ պատկերաքանդակներ: Վառարաններից երկուսի վրա փորագրված են պատրաստման ժամանակի տվյալները՝ 1866 թ. հուլիսի 20 և 1881 թ. հունիս, ինչը նշանակում է, որ այդ թվերին գյուղում կյանքն ընթացել է բնականոն հունով: Գեղեցիկ է նաև պարսպի կամարակապ մուտքը, որտեղից մինչև եկեղեցու շինք ձգվում է սալակված արահետ: Տարածքի շքամուտքից մի քանի քայլի վրա բարերարը տեղադրել է Արագածի սառնորակ ջրերից բխող ցայտաղբյուր:

Բարեկարգման աշխատանքներին մասնակցել են նաև Համլետի եղբայրները՝ գյուղապետ Հրաչ Թադևոսյանը, գյուղի դպրոցի ուսմասվար Համբարձում Թադևոսյանը, Վաչիկ Թադևոսյանը, նրանց ընկերները, ամբողջ գյուղացիները<sup>142</sup>:

Նույն՝ 2017 թ., Համլետ Թադևոսյանը եկեղեցուն նվիրաբերել է Մկրտուկյան մարմարակերտ ավազան, իսկ քանդակագործ Աշոտ Ներսիսյանը՝ Սուրբ Սեդան: Դրանք ժողովրդական մեծ հանդիսությունից առաջ թվականի սեպտեմբերի 30-ին՝ Սուրբ Գևորգ քաջամարտիկ Զորավարի տոնի օրը, օծել է Արագածոտնի թեմակալ առաջնորդ Տեր Մկրտիչ եպիսկոպոս Պողոսյանը<sup>143</sup>, նոր շունչ հաղորդելով վերածված հնամենի տաճարին:

Հետադուր՝ Համլետ Թադևոսյանը հիմք դրեց հնով վերափմաստավորված նորօրյա մի ավանդույթի, երբ նրա նախաձեռ-

<sup>142</sup> Տե՛ս «Թալին աշխարհ», հասարակական, քաղաքական, մշակութային անկախ թերթ, հոկտեմբեր, թիվ 10/6563/2019 թ., էջ 3:

<sup>143</sup> Տե՛ս «Արագած աշխարհ», Արագածոտնի մարզային անկախ լրագիր, թիվ 15-16 (203)(3131), 1-20 հոկտեմբերի 2017 թ., էջ 4:

նուլթյամբ ու ծախսով ամեն տարի ուխտագնացություն է կատարվում Գառնահովտի եկեղեցի՝ Ս. Գևորգ Ջորավարի տոնին՝ Խաչվերացի երկրորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը, որի ժամանակ զանազան վայրերից մեծ թվով ուխտավորներ են ցնծությամբ տոնախմբվում գյուղում:

## Որպես Post Scriptum (Հետգրություն) Գառնհովտ տեղանվան

Արշարունիք պատմագրական Բազարան բերդաքաղաքի Ս. Կաթողիկե եկեղեցու 1034 թ. արձանագրությունում հիշատակվում են Գառնովտ վայր և տեղում հողի վաճառքի գործարք կատարող Խորձանը՝ որդի Իսաւրի (տե՛ս «Վիմական տարեգիր», ՍՊԲ., 1913, էջ 18): Չնայած վայրի «Դիրքն ու բնույթն անորոշ» են (Տեղանունների բառարան, հ. 1, էջ 795), սակայն, հնարավոր է, այն աղբյուրներ ունենա ներկայիս Գառնահովտի հետ: Մեր ենթադրությամբ՝ Բազրատունյաց թագավորության ժամանակ փորձել են վերականգնել որոշ բնակավայրերի մոռացված հայկական անունները: Եվ ահա, գտնելով արաբացված Ադդամանի Խաշուտ ձևը, որը, ինչպես ասել ենք, ծագում է՝ Երաշխուտ = Երաշխավորից, կարծել են, թե այն առաջացել է «խաշն» (մանր եղջերավոր կենդանիների հոտ) արմատից + «ուտ» (տվյալ դեպքում արոտավայր ցուցող) վերջածանցից և գյուղանունը դարձրել են Գառն(հ)ովտ: Բայց սելջուկյան տիրապետությոն հաստատմամբ (XI դ. II կես) Գառն(հ)ովտը մոռացության է մատնվել, և շարունակվել է գործածվել Ադդաման՝ արաբական տարբերակը, որն էլ թուրքերն իրենց արտասանությամբ ձևափոխել են Ադիյամանի:

Ակնբախ է, որ Խորհրդային ժամանակներում գյուղանվան հայկականացման գործում մեծ դերակատարություն է ունեցել հայ պատմագրիտական-աղբյուրագիտական պրպտուն միտքը, որի արդյունքում ինը հարյուր տարվա հեռավորությունից դուրս է բերվել Գառն(հ)ովտ տեղանունը և հմտորեն պատշաճեցվել ներկայիս բնակավայրին:

## ПРЕДИСЛОВИЕ

*Святой Георгий Победоносец является вселенским, общехристианским святым. Церкви, названные его именем, есть почти у всех христианских народов, и, что примечательно, Георгий Победоносец считался святым покровителем Англии.*

*Святой Георгий родился в христианской семье, проживающей в округе Кесарии, столицы Каппадокии, после второй половины III в., воспитывался в духе христианства. Поступив на службу в римскую армию, Георгий, благодаря своей храбрости и мудрости за короткое время стал военачальником.*

*Согласно традиции, Георгий Победоносец убил дракона, освободив одну деву, брошенную ему на съедение.*

*Во время гонений христиан, учиненных римским императором Диоклетианом (284-305), военачальник Георгий отказался выполнить приказ императора и подвергнуть насилию мирное население.*

*Более того, он порвал царский указ на площади Никомидии, из-за чего был арестован, подвергнут пыткам и затем обезглавлен.*

*Святой Георгий пал мученической смертью в городе Никомидия, в 303 году, где и был захоронен. Сирийские христиане забрали его тело в город Диосполис Палестины (назывался также город Рамла или Лод, находился недалеко от нынешнего аэропорта Тель-Авива), где мощи святого были выставлены в сирийской церкви до XIII века.*

*Согласно армянскому историографу Захарию Саркавагу (XVII в.), Патриарх Армении Нерсес Великий (353-373)*

принес тело военачальника Георгия (вероятнее, голову – А.М.) в Армению и захоронил его в Ованаванке<sup>144</sup>.

Святой Георгий в основном, как и все святые воины, в армянской иконографии изображается сидящим на коне и поражающим копьём извивающегося на земле дракона. Аллегорически дракон представляет зло мира, демоническую мощь и деспотизм, против которых воистину боролись отважные святые воины – мученики Христа.

В средневековой Армении армянские цари и военные считали Святого Георгия своим покровителем.

Что касается церкви Св. Георгия в Гарнаовите, то предполагается, что современник католикоса Нерсеса Великого, к которому мы вернемся далее, получив непосредственно от святого патриарха святые мощи военачальника, принес их в село и на месте построил во имя его святилище. Это святилище находилось в западной части храма. В дальнейшем на месте последнего была воздвигнута величественная церковь, ставшая свидетельницей исторических событий, происходящих в течение 1350 лет.

---

<sup>144</sup> См. Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарии М. О. Дарбинян-Меликян, М., 1969, с. 269-270.

## ЦЕРКОВЬ СВЯТОГО ГЕОРГИЯ: АРХИТЕКТУРА

Церковь, построенная в далеком высокогорном селе, примечательная своей изысканной архитектурой и своеобразным величием, всегда привлекала внимание армянских и иностранных специалистов. К архитектурным особенностям церкви обращались Т. Тораманян<sup>145</sup>, А. Еремян<sup>146</sup>, Н. Токарский<sup>147</sup>, Г. Чубинишвили<sup>148</sup> и другие. Архитектуру сооружения наиболее детально исследовал Т. Марутян<sup>149</sup>.

Церковь Св. Георгия относится к середине VII века. Церковь центрально-купольная. По своей планировке внешне прямоугольная, внутри – четырехапсидная-крестообразная с четырьмя ризницами, пристроенными в четырех углах, которые соединяются с центральным пространством храма посредством открытых в трехчетвертных нишах входов. Постройка не имеет колонн. Длина ее, согласно архитектору Т. Марутяну, составляет 19.5 м, ширина - 15.70 м, а высота - 9 м до карниза. Постройка основана на

---

<sup>145</sup> См. Т. Тораманян, Материалы по истории армянской архитектуры, Сборник трудов, I, II, Ереван, 1942, 1948 (на армянском языке). Т. Тораманян сообщает, что в западной части нынешнего храма была другая церковь, основания которой были разрушены сельчанами, для постройки их жилищ. Была построена из более крупных камней, которыми была сооружена передняя часть бемы алтарной апсиды (см. сборник 2, стр. 163).

<sup>146</sup> См. А. Еремян, Храм Рипсима, Ереван, 1955.

<sup>147</sup> См. Н. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1946. Н. Токарский, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961.

<sup>148</sup> См. Г. Чубинишвили, Памятники типа Джвари, Тбилиси, 1948. Г. Чубинишвили, Разыскания по армянской архитектуре, Тбилиси, 1967.

<sup>149</sup> См. Т. Марутян, Храм Авана и аналогичные памятники, Ереван, 1976 (на армянском языке).



трехступенчатом стилобате, который символизирует Святую Троицу (см. Рис. 1, стр. 7).

На всех четырех фасадных стенах, как и на стенах храма Рипсима и некоторых похожих памятников, на равном расстоянии друг от друга открыты по две одинаковые армянские ниши. Помимо того, что они делали постройку более устойчивой к землетрясениям, также придавали церкви особую выразительность. Все ниши церкви Гарнаовита имеют трапецевидную форму в основании, а наверху венчаются конхой в виде усеченного конуса.

Церковь Св. Георгия отличается от иных похожих культовых сооружений тем, что ниши главного, западного фасада «в внутренней части имеют парные колонны (с базой и капителью)... были поставлены макет храма и каменные кресты, следы которых не сохранились»<sup>150</sup>. Однако, можно предположить, что на этих двух колоннах были помещены памятник Святого Георгия, держащего в правой руке копье, наконечником вниз, и бюст ктитора церкви, с макетом храма на вытянутых руках.

Предполагается также, что памятник ктитора был установлен в южной нише западной стены, так как нижние части конхи ниши в правой и левой сторонах заканчиваются рельефными изображениями треугольных пучков солнечный лучей. А их смысл следующий: пусть дни ктитора на земле будут долгими.

Между парами ниш на всех четырех фасадах есть большие окна, благодаря которым свет проникает внутрь

---

<sup>150</sup> Там же, с. 55.

храма. Окна увенчаны бровками, на двух из которых высечены каллиграфические именные надписи мастеров: Григор (см. Рис. 2, стр. 9, Рис. 3, стр. 10) и Мовсес (см. Рис. 4, стр. 11).

Церковь Гарнаовита имеет два входа: западный (главный) и южный. Автором же данных порталов является мастер, знак которого напоминает латинскую букву «А».

Как западный, так и южный порталы украшены элементами, характерными для армянской архитектуры: пилястрами с обеих сторон, капители которых соединяются друг с другом посредством красивых арок. Ниже их расположены полукруглые тимпаны из больших монолитных камней. Сами двери прямоугольные.

Входящий в гарнаовитский дом Господень чувствует облегчение и душевное удовлетворение: «внутреннее пространство храма великолепно, впечатляюще, оно просторное, высокое, формы четкие и упорядоченные, достаточно освещенные. Здесь все выполнено с чувством, с любовью»<sup>151</sup>. В целом, в планировке Гарнаовита есть поразительная упорядоченность, которая не отмечается в других памятниках.

Восточная и западная апсиды, однако, более широкие и глубокие, а также высокие по сравнению с северной и южной. Это сделано с той целью, чтобы верующий, входящий в церковь, направился к главному алтарю, для того чтобы видеть и стать участником церемоний. Бема главного, восточного алтаря высокая, на которую служащие святилища поднимаются по трем ступеням с северной и

---

<sup>151</sup> Там же, с. 59.

южной сторон. Они символизируют Святую Троицу, а также являются путем Спасения, ведущим к Распятию (Святой Алтарь) на Голгофе (бема).

В нижних частях конх всех четырех апсид и  $\frac{3}{4}$  ниш камнями различных цветов выложены изображения солнца, испускающего лучи. Особенно выразительными являются высокохудожественные изображения солнца западной и восточной апсид, которые выложены из камней черного, красного и серого цветов. Солярные диски изображены в виде полушарий, что является символом восходящего солнца.

Тиран Марутян считает  $\frac{3}{4}$  (трехчетвертные) ниши важным элементом после апсид в организации внутреннего пространства церкви. Их важная роль состоит в рациональной организации перехода от центральной части церкви к угловым комнатам - ризницам, а не купольного перехода, как ошибочно полагали иностранные архитекторы, несправедливо обвиняя зодчего, называя его безграмотным и не понявшим смысла сторительной системы всего здания.

Внутренние стены церкви Св. Георгия были покрыты штукатуркой, следы которой местами сохранились. Это означает, что стены церкви были покрыты фресками. Данный вид искусства был распространен в армянских раннесредневековых церквях до окончательного установления иконоборческой власти арабов в начале VIII века. Преположительно, основной тематикой фресок церкви Гарнаовита был образ драконоборца Святого Георгия на белом коне и с копьем в руках.

Церковь Св. Георгия Гарнаовита имеет мощные акустические свойства, которые нам не встречались в других церквях. Причиной тому являются округлые пустоты значительных размеров, которые в свое время были использованы

в качестве тайников. Они образовались над перекрытиями апсид, под двускатными крышами, где крылья креста в верхней части венчаются фронтонами.

Общее число тайников достигает двенадцати, что является символом апостолов. Сегодня высокие входы данных тайников видны в верхней части южных и северных ризниц.

На стыке четырех крыльев церкви Гарнаовита возвышается великолепный купол, один из тех редких, который целостно сохранился со дня постройки. По мнению специалистов, архитектор при пристройке купола церкви Гарнаовита как в некоторых внешних, так и во внутренних деталях повторил формы барабана купола церкви Св. Иоанна (V век) в Мастаре<sup>152</sup>, на расстоянии 6-8 км, но в некоторых случаях дал иные решения.

Так, число окон купола в Мастаре составляет восемь, на каждой грани по одному. Число окон на барабане купола в Гарнаовите составляет двенадцать. Тем самым архитектор решил две задачи: обеспечить большее проникновение света в храм, и в духовном смысле, обеспечить постоянное присутствие божественного света апостольской проповеди в земном доме Иисуса Христа.

Двенадцать окон гарнаовитской церкви соответствуют числу апостолов. Все окна сверху обрамлены бровками, которые имеют следующие значение и смысл. На четырех фасадных гранях помещено по два окна, которые не только гармонируют с окнами и нишами постройки, а также в богословском и церковном смысле символизируют те четыре

---

<sup>152</sup> См. А. Манучарян, Л. Агаджанян, Մանուշահի Ս. Հովհաննիս Եկեղեցի, Церковь Св. Иоанна в Мастаре, The Church of St. John of Mastara, Ереван, 2019, с. 30.

пары апостолов Иисуса Христа, которые приходились друг другу родными братьями (Св. Петр+Св. Андрей, Св. Иоанн Богослов+Св. Иаков Старший Зеведеев, армянский апостол Св. Фаддей Леввей+Св. Иаков Младший Алфеев, Св. Фома+Св. Фаддей Близнец<sup>153</sup>).

На остальных четырех гранях имеется по одному окну меньших размеров, которые символизируют второго армянского апостола Св. Варфоломея Нафанаила, Св. Филиппа, Св. Матфея Евангелиста и Св. Симона Кананита.

В Гарнаовите, также как и в Мастаре, переход к купольной системе осуществлен посредством старого тропового метода, а не нового парусного. Архитектор прекрасно знал, что сколько бы ни повреждалась сама постройка церкви Св. Иоанна в соседней Мастаре, ее огромный купол твердо противостоит ударам времени в этом горном регионе около 200 лет. Именно потому было разумно применить ту же систему перехода. Более 1350 лет истории доказали правоту архитектора.

Архитектор церкви Св. Георгия в Гарнаовите свое имя "Вардэс" вырезал дважды. В первом случае он увековечил свое имя в северной части верхнего окна над главным, западным порталом, вырезав его в двуслоговой лигатурной форме. Однако имея опасение, что в дальнейшем имя будет расшифровано неточно, написал его южнее того же окна полностью (см. Рис. 5, стр. 19).

---

<sup>153</sup> Правда, вместо предателя Иуды в качестве 12-го апостола по жребию был временно избран Матфий, но Фаддей Близнец равен ему среди 70 (72) учеников Иисуса Христа.

## **ГАРНАОВИТ И ЦЕРКОВЬ СВ. ГЕОРГИЯ НА ПЕРЕКРЕСТКАХ ИСТОРИИ**

*Исконно армянское название села, к сожалению, неизвестно.*

*Село было названо Гарнаовит в середине XX века. До того называлось в тюркизированной форме Адыяман – *Adi Amap*, которая произносилась также как *Adi Yaman*.*

*Гарнаовит исторически являлся частью провинции Ширак.*

*Армянский царь Трдат Великий (286-330) после Первого Никейского Вселенского собора в 325 году, дарит провинции Ерасхадзор и Ширак своему крестнику пахлавику Камсару, после смерти которого его старший сын Аршавир становится главой рода. Центром был Мармет (Ервандашат). Аршавир Камсаракан настолько любил провинцию Ерасхадзор, что называл его по своему имени Аршаруник. Предположительно, Ширак в качестве феодального владения был отдан младшему сыну Камсара Нерсеху, которому принадлежало также нынешнее село Гарнаовит, так как оно исторически было включено в данную провинцию.*

*В то время, когда Католикос Великой Армении Нерсес I Партев (353-373) привез мощи Св. Георгия в Ованнаванк, как было отмечено в предисловии, Нерсех Камсаракан получил от католикоса реликвию Полководца и в Гарнаовите построил в его честь церковь, которая находилась в западной части нынешнего храма.*

*В истории Нерсех I Камсаракан известен разрушением города Аршакаван в 358 году, который был основан армянским царем Аршаком на склонах горы Арарат в начале его правления. Нерсех возглавил нападение княжеских войск на*



этот город, где по призыву Аршака II (345-368) и благодаря предоставлению различных привилегий, обосновались должники, заёмщики, обманщики, грабители, убийцы, сбежавшие от своих хозяев слуги, вредители, преступники всякого рода. Примечательно, что после своего брата Аршавира, Нерсех стал «господином Ширака и Аршаруника».

Князья основательно разрушили Аршакаван, истребил все население, кроме младенцев, потому как были разгневаны своими слугами и всеми, приносящими вред. В 363 году царь Аршак отомстил за разрушение города, названного его именем, убив главных инициаторов, особенно уничтожив род Камсараканов, не пощадив даже женщин и детей. Никто из них не спасся, кроме Спандарата, сына Аршавира I Камсаракана. А владения были присоединены к царскому двору.

Село Гарнаовит помимо великолепной церкви Св. Георгия, известно также своей раннесредневековой стелой, которая была перемещена и хранится на площадке перед Сардарпатским музеем, а копия стоит у входа в Государственный музей Истории Армении. К этой уникальной стеле обращались многие ученые, но в их исследованиях, относящихся к вопросам датировки и иконографии, остаются вопросы, требующие окончательных ответов.

По описанию Бабкена Аракеляна, стела имеет большие размеры, «ее верхняя часть разбита. Высота оставшейся части составляет 1. 65 м, ширина одной стороны составляет 0.50 м, другой – 0.60 м. При сравнении с подобными памятниками, исходя из ширины лицевых сторон и изваяний,

можно предположить, что первоначально стела достигала трех метров в высоту и несколько сужалась кверху»<sup>154</sup>.

Торос Тораманян считает квадратную стелу произведением искусства языческого периода<sup>155</sup>, не обращая внимания на Библейские изображения на первой грани, где на горе Мориа (Бытие 22:1-13), согласно Гарегину Овсепяну, «изображена сцена жертвоприношения Авраама. На трехступенчатом пьедестале стоит столп и на нем квадратный стол, на котором сидит поджав под себя ноги Исаак. Авраам поднял левую руку, держит жертву за голову или волосы, а правую руку он протянул, вероятно, с мечом в руках... для того, чтобы разрезать горло. Над головой Исаака видно нечто, что должно быть овном, повешанным на дерево Сабек... ниже групповой композиции изображен обычный трехлистный акант. Половинки двух листов по обоим краям изображены уже на смежных гранях»<sup>156</sup> (см. Рис. 6, стр. 26).

На второй грани сохранилось неполное изображение мужчины, одежда которого свидетельствует о том, что он был представителем великосветского общества (см. Рис. 7, стр. 27).

Усопший, несомненно, являлся представителем рода Камсаракан, так как в их феодальных владениях находилось село Гарнаовит. А кто может быть здесь изображен?

---

<sup>154</sup> Б. Аракелян, Сюжетные рельефы Армении IV-VII веков, Ереван, 1949, с. 49 (на армянском языке).

<sup>155</sup> См. Т. Тораманян, Сборник, I, с. 23.

<sup>156</sup> Г. Овсепян, Материалы и исследования истории армянского искусства и культуры, выпуск III, Нью-Йорк, 1944, с. 112-115 (на армянском языке).

*Ответ на данный вопрос подсказывает наличие сцены жертвоприношения Авраама на первой грани. Тема не выбрана случайно: усопший, который является зрелым человеком, судя по облачению, имеет много схожих черт с Авраамом и Исааком. Приносимый в жертву младенец Исаак спасается волею Бога. Из уничтожаемого Аршаком II-м рода Камсараканов спасается только Спандарат, который был юношей. Его жена, Аршануйи происходила из царского рода Аршакуни (в средневековье в Армении мальчикам позволялось жениться в 14/15, а девочкам - в 12 лет).*

*С армянского языка имя Спандарат можно перевести как «избежавший бойни».*

*После героического сражения с персами в Дзиравской битве 371 года, Спандарат Камсаракан в награду за храбрость получил обратно от армянского царя Папа (369-373) родные провинции Аршаруник и Ширак.*

*Третья грань стелы самая загадочная. Здесь изображена женщина (см. Рис. 8, стр. 31). Предполагалось, что она являлась языческой богиней Анаит, без учета христианского происхождения памятника (ветхозаветная сцена жертвоприношения Авраама), либо Матерью Божьей, в случае чего не было обращено внимание на отсутствие нимба. Женщина идентифицировалась также со спутницей Авраама Саррой. Известно, что Сарра родила Авраама в почтенном возрасте, следовательно, она должна была быть изображена в образе характерном для пожилого возраста, также как и ее муж, Авраам, на первой грани стелы. Однако женщина имеет молодое и гибкое тело.*

Аракел Патрик в свою очередь попытался изобразить женичину в национальном костюме, в следующем воспроизведении<sup>157</sup> (см. Рис. 9, стр. 33).

Мы считаем, что красавицу олицетворяет Аршануйи Аршакуни, жена Спандарата. Пояс, стягивающий ее тело помимо подчеркивания красоты женичины, указывает на ее статус княгини.

Что касается последней, четвертой грани, то на ней внизу сохранилась та же самая ветвь аканта, выше которой, в углублении, в самой нижней части, изображена треугольная стрела с коротким хвостиком, направленная кверху (см. Рис. 10, стр. 34). Стрела наряду с крестом символизирует победу христианства. В христианской иконографии треугольник может символизировать Святую Троицу.

Согласно интерпретации Б. Аракеяна, «на четвертой грани мы имеем нижнее длинное крыло креста с широким копьеобразным основанием, которое можно встретить в районе Талина, Мрена и Дарбанда»<sup>158</sup>.

Таким образом, из вышеуказанного выясняется период создания стелы Гарнаовита – вторая половина IV века.

